Ազգ Azg
13 ՄԱՐՏ 2010 ՇԱԲԱԹ 44 (4425)
ISSN: 1829-1651

# Վահագն Չախալյանի դեմ նոր գործ է հարուցվել

Երեկ «Երկիր» միությունից տեղեկացրին, որ ջավախահայ հաղահական գործիչ Վահագն Չախալյանի նկատմամբ վրացական իշխանությունները հարուցել են նոր քրեական գործ՝ 2005-ի հուլիսին Ջավախքի Սամսար գյուղի հայ եկեղեցու վրացականացման ձախողված փորձի եւ նույն թվականի դեկտեմբերին հայ-վրացական սահմանի՝ Բավրայի անցակետի մոտ տեղի ունեցած ջավախահայության բողոքի ցույցի առնչությամբ: Այս մասին Վահագն Չախալյանին եւ նրա փաստաբաններին տեղեկացրել են հատուկ Չախալյանին հարցաքննելու համար Ռուսթավիի գաղութ ժամանած Ախալքալաքի եւ Նինոծմինդայի շրջանների ոստիկանության քննիչներ **Ստեփան Խեչոյանն** ու **Գեւորգ Քոսեյանը**: Վերջիններս նշել են, որ քրեական նոր գործի հարուցման համար հիմք է եղել Չախալյանի՝ վերջերս լույս տեսած «Բանտային-քաղաքական գրառումներ» գրքույկը: Իբր թե այստեղ ոստիկանները «հայտնաբերել» են այնպիսի ապացույցներ, որոնք թույլ են տալիս 2005-ին հարուցված քրեական գործերով՝ հինգ տարի անց նոր մեղադրանքներ առաջադրել 10 տարվա ազատազրկման դատապարտված Չախալյանին:

# Ո՞ւմ համար են ադրբեջանական դեսպանության սերը

ՀԱԿՈԲ ԱՍԱՏՐՅԱՆ
Պրահա

Չեխիայում Ադրբեջանի դեսպան **Թահիր Թաղիզադեն** իր ձախողված գործունեությունն արդարացնելու համար կախվել է փրփուրներից: Այդ նպատակով ադրբեջանական Day.az ինտերնետային կայքին դարակազմիկ մեկնաբանություն է տվել՝ կապված չեխ լրագրողուհի Դանա Մազալովայի հայաստանյան այցի ընթացքում հնչեցրած մտքերի եւ չեխահայ համայնքի գործունեության հետ: Հիշեցնենք, որ Մազալովան Երեւանում կայացած ասուլիսում իբրեւ ականատես փաստել էր, որ ադրբեջանցիները Չեխիայում քարոզչական նպատակներով չպետք է օգտագործեն Լիդիցե հուշահամալիրի խորհրդանիշը, որ չպետք է կեղծեն Խոջալուի դեպքերի հետ կապված լուսանկարներն ու տեսաշարերը, որոնք նկարահանել էր հետագայում Բաքվում սպանված ադրբեջանցի լրագրող Չինգիզ Մուստաֆաեւը, եւ որ 1992-ին իրեն տված հարցազրույցում Խոջալուի դեպքերը կասկածի տակ է դրել նախկին նախագահ Մութալիբովը: Բնականաբար ճշմարտության նման բացահայտումը չէր կարող չհուզել Չեխիայում Ադրբեջանի դեսպանին:


Լիդիցեի թանգարանի շենքը

Ադրբեջանի դեսպանության կամ, ավելի ճիշտ կլինի ասել, դեսպանի առաջ քաշած «գնահատականները» ուղղակի չեն դիմանում անգամ ամենաթեթեւ վերլուծությանը:

Նախ, նրա կարծիքով, Դանա Մազալովան Չեխիայի հայ համայնքի ազգայնականների ազդեցության տակ դարձել է գործիք՝ հայկական քարոզչական խաղերում: Ցավում եմ, որ դեսպանը, որ փորձել է փորփրել Դանա Մազալովայի անցյալը, միայն իրեն հաճո տեղեկություններ է քաղել: Դանան այն եզակի լրագրողներից է, որ պատերազմի տարիներին անաչառ լուսաբանել է Ղարաբաղյան հակամարտությունը, ունեցել է թե՛ հայ եւ թե՛ ադրբեջանցի ընկերներ, եւ արժանացել լրագրողական մրցանակների՝ օբյեկտիվ լրատվություն հաղորդելու համար:

Տես էջ 3

# Ճշտվել են ադրբեջանցի դիվերսանտների անունները

«**Ազգ**»-ը մարտի 6-ի համարում տեղեկացրել էր, որ Տավուշի մարզի Կոթի գյուղում հայտնաբերվել է ադրբեջանական դիվերսիոն խումբ, որը հայկական տարածքում զբաղված է եղել նաեւ անասնագողությամբ: Երեկ ՀՀ պաշտպանության նախարարության տարածած հայտարարության համաձայն՝ ճշտվել է, որ ադրբեջանական դիվերսիոն խումբը Հայաստան է ներթափանցել քաղաքացիական հագուստով, կազմված է եղել 5 հոգուց, նպատակներից են եղել տեղեկություններ հավաքելը եւ հետախուզական գործունեություն ծավալելը: «Գնահատելով իրավիճակը՝ մեր զինծառայողները նախազգուշական կրակ են բացել: Սկսվել է փոխհրաձգություն, ինչի հետեւանքով հակառակորդի դիվերսիոն խմբի անդամներից մեկը վիրավորվել է եւ գերեվարվել: Վերջինս հիվանդանոց տեղափոխելու ճանապարհին մահացել է: Երկրորդ վիրավորված զինյալը եւ խմբի մնացած անդամները մթության պայմաններում կարողացել են փախչել Ադրբեջան:

Օպերատիվ տեղեկությունները հաստատում են, որ ադրբեջանական կողմը պատրաստվում էր Հայաստանի տարածք ուղարկել եւս մի քանի հետախուզական խմբեր: Դրանց հնարավոր գործունեությունը խափանելու նպատակով ՀՀ ԶՈՒ հատուկ ստորաբաժանումների կողմից կազմակերպվել էին սահմանի տվյալ հատվածի պահպանության լրացուցիչ միջոցառումներ:

Տես էջ 2

ՈՒՐԱՑՈՂԸ ԳԱԶԱԶՈՒՄ Է

# Հիվանդագին արձագանք Շվեդիայի խորհրդարանի որոշմանը

## Չեղյալ է հայտարարվել Թուրքիայի վարչապետի այցը Ստոկհոլմ

ՀԱԿՈԲ ՉԱՔՐՅԱՆ

Մարտի 4-ին ԱՄՆ Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատի արտաքին հարաբերությունների հանձնաժողովում Հայոց ցեղասպանության օրինագծի ընդունումից հետո՝ մարտի 11-ին ցեղասպանության ճանաչման բանաձեւ ընդունեց Շվեդիայի խորհրդարանը: Դրան նույն օրը հետեւեց ցեղասպանության բանաձեւի ներկայացումը Իսպանիայի խորհրդարան:

Ի տարբերություն Իսպանիայի խորհրդարան ներկայացված բանաձեւի, որը հայերի ցեղասպանության մասին է, Շվեդիայի խորհրդարանում ընդունածը դատապարտում է նաեւ ասորիների եւ Պոնտոսի հույների ցեղասպանությունները Օսմանյան կայսրությունում: Նշված բանաձեւերի ընդունման կամ խորհրդարան ներկայացման փաստը ցույց է տալիս, որ հայ-թուրքական արձանագրությունների ստորագրումը չի խոչընդոտել Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչմանը, ընդհակառակը, խթանել է ճանաչման գործընթացի ծավալումը, ըստ երեւույթին պայմանավորված ստորագրությունների վավերացման հարցին Անկարայի բացասական դիրքորոշմամբ:

Համենայն դեպս, Ներկայացուցիչների պալատի հանձնաժողովը ցեղասպանության օրինագիծն ընդունելիս հիմք էր համարել նաեւ դիրքորոշման հանգամանքը: Ինչ վերաբերում է Շվեդիայի եւ Իսպանիայի խորհրդարաններին, ապա դրանք էլ համանման բանաձեւերով արձագանքել են հանձնաժողովի որոշմանը: Դրանով միաժամանակ հաստատվել է, որ Եվրոմիության երկրների դիրքորոշումը միասնական է ինչպես Հայոց ցեղասպանության, այնպես էլ հայ-թուրքական արձանագրությունների նկատմամբ:

Տես էջ 5

# Փոխատեղումներն ի վերջո իրականացան

Վերջնականապես ճշտվեցին կադրային փոփոխությունների մասին լուրերը, որ Հանրային հեռուստաընկերության գործադիր տնօրեն **Արմեն Արզումանյանը** նշանակվել է հանրապետության նախագահի մամլո քարտուղար, իսկ այդ պաշտոնը զբաղեցնող **Սամվել Ֆարմանյանն** այսուհետեւ կգլխավորի Հանրային հեռուստաընկերության քաղաքական եւ լրատվական հաղորդումների բաժինը, այդ թվում «Հայլուր» լրատվականը:

# Հանրապետությունում գների բարձրացման վերաբերյալ Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի հայտարարությունը

Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիան իր մտահոգությունն է հայտնում հանրապետությունում լայն սպառման ապրանքատեսակների եւ ծառայությունների շարունակական գնաճի կապակցությամբ, որն անշուշտ ծանր հետեւանքներ կթողնի բնակչության ապրելակերպի վրա: Կխորանա սոցիալական ճգնաժամը, որի հետեւանքով էլ կնվազի բնակչության կենսամակարդակը, կավելանա սոցիալապես անապահով ընտանիքների քանակը:

Նախադեպը 2009 թ. գազի սակագնի բարձրացումն էր, որը շղթայական ռեակցիայի ձեւով տարածվեց տնտեսության տարբեր հատվածների վրա, ինչն էլ հանգեցրեց առաջին անհրաժեշտության ապրանքների եւ ծառայությունների գների բարձրացմանը:

Նոր գնաճը այդքան զգալի չէր ազդի բնակչության կենսամակարդակի վրա, եթե ժամանակին ընդունված լինեին մի շարք անհրաժեշտ օրենքներ: Բայց քանի որ մինչ օրս Հայաստանի Հանրապետությունում ընդունված չէ «Աշխատավարձի ինդեքսավորման մասին» օրենքը, ուստի կանոնակարգված չէ նաեւ աշխատավարձի գնողունակությունը: Սահմանված չէ նաեւ կենսապահովման նվազագույն զամբյուղը, որը հիմք պետք է հանդիսանա նվազագույն աշխատավարձի, կենսաթոշակների, ինչպես նաեւ նպաստների, սոցիալական այլ վճարների չափերի որոշման համար:

Մինչդեռ ՀՀ սահմանադրությամբ մարդուն տրված է իր եւ իր ընտանիքի համար բավարար կենսամակարդակի, ինչպես նաեւ կենսապայմանների բարելավման իրավունք, որի իրականացման համար անհրաժեշտ միջոցառումներ պետք է ձեռնարկի պետությունը:

Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիան հույս է հայտնում, որ պետական մարմինները կտրուկ միջոցներ կձեռնարկեն բնակչության սոցիալական բեռը թեթեւացնելու ուղղությամբ եւ թույլ չեն տա հասարակության մեջ լրացուցիչ սոցիալական լարվածության առաջացման:

ՀԱՄԿ-ի նախագահություն

# Թուրքը կանխատեսում է արձանագրությունների մահը, ադրբեջանցին սեթեւեթում է, իսկ հայը փորձում է պատասխանել բոլորին

## Այս բոլորը՝ ՆԱՏՕ-ի սեմինարում

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Երեկ շարունակվող ՆԱՏՕ-ի Ռոուզ-Ռոթ սեմինարի քննարկումներից ակնհայտ դարձավ, որ ոչ ԼՂ կարգավորման, ոչ հայ-թուրքական հարաբերությունների հարցում տեսակետները մազաչափ անգամ չեն մոտեցել, եթե չասենք, ընդհակառակը, արագություն հավաքելով հեռանում են: Համենայն դեպս, այդպիսին էր տպավորությունը Միջազգային ճգնաժամային խմբի վերլուծաբան, ադրբեջանցի **Թաբիբ Հուսեյնովի**, նույն խմբի եվրոպական ծրագրերի տնօրեն **Սաբինա Ֆրեյզերի** եւ Թուրքիայի «Արդարություն եւ բարգավաճում» կուսակցության արտաքին հարաբերությունների փոխնախագահ եւ թուրք ամերիկյան բարեկամության խմբի ղեկավար **Սուաթ Քընըքլըօղլուի** ելույթներից հետո:




Բայց նախ պատմենք ԵԱՀԿ Մինսկի խմբի ֆրանսիացի համանախագահ **Բեռնար Ֆասիեի** ելույթի մասին, ով կողմնակից է Լեռնային Ղարաբաղին բանակցություններին մասնակից դարձնելուն, չնայած պարզվեց, որ Լեռնային Ղարաբաղ ասելով նա նկատի ունի ոչ թե ԼՂՀ-ն, այլ այնտեղի բնակչությանը, այդ թվում՝ մինչեւ հակամարտությունն այստեղ ապրող ադրբեջանցիներին, ովքեր պետք է վերադառնան իրենց նախկին բնակավայրը: Բացատրելով ԼՂ-ի դուրս մնալը բանակցային գործընթացից, Ֆասիեն դա կապեց նախկին նախագահ Ռոբերտ Քոչարյանի հետ, ով ցանկություն էր հայտնել բանակցություններում ներկայացնելու եւ Հայաստանը, եւ Լեռնային Ղարաբաղը: Պատասխանելով բազմիցս արծարծված այն հարցին, թե Կոսովոյի անկախության ճանաչման նախադեպը կարելի՞ է Ղարաբաղի դեպքում կիրառել, ֆրանսիացի համանախագահը երկու հակամարտություններում իրավիճակները բացարձակապես համատեղելի չհամարեց՝ Կոսովոն մեկ երկրի դեմ էր պայքարում նրա ներսում, ԼՂ-ն Ադրբեջանի դեմ է, բայց երկու երկրների միջեւ է, Կոսովոյում տեւաբար միջազգային ուժեր են եղել, իսկ Հայաստանում, Ադրբեջանում եւ ԼՂ-ում այդպիսիք չեն եղել, եւ վերջապես ԼՂ-ն ոչ ոք չի ճանաչել, անգամ Հայաստանը:

Տես էջ 4

AZG NEW PDF.qxd 12/03/2010 22:58 Page 1



ՕՐԻՆԱԳԻԾ

# Պարտադիր ավտոապահովագրում

Ազգային ժողով ներկայացված եւ առաջին ընթերցմամբ անցած «Պարտադիր ավտոապահովագրման մասին» օրինագիծը եւ դրանից բխող հետեւանքները երեկ քննարկեցին «Աքիլլես» ավտովարորդների իրավունքները պաշտպանող կենտրոնի նախագահ **Էդուարդ Հովհաննիսյանն** ու «Ռասկո» ապահովագրական ընկերության տնօրեն **Արա Քառյանը**: Հովհաննիսյանը նշեց, որ իրենց կազմակերպությունն արդեն քանի տարի բարձրաձայնում է այդ խնդրի անհրաժեշտության մասին. «Մենք նույնիսկ կարծում ենք, որ օրինագիծը ուշացած է: Մենք նաեւ մտավախություն ունենք, որ հաշվի առնելով, թե ինչպես է աշխատում մեր ճանապարհային ոստիկանությունն ու ինչպիսի մենթալիտետ ունենք, կաշխատի՞ արդյոք օրինագիծը, եթե հաստատվի», ասաց Հովհաննիսյանը:

Ապահովագրական կազմակերպության տնօրեն Քառյանն իր հերթին տեղեկացրեց, որ գոյություն ունեն ավտոապահովագրության մի քանի տեսակներ. «Կա «Կասկո» ապահովագրությունը, երբ ապահովագրվում է միայն մեքենան, կա մի տեսակ, երբ ապահովագրվում են մեքենայի մեջ նստած մարդիկ, եւ կա ապահովագրություն, երբ որեւէ երրորդ անձի կյանքը, առողջությունը կամ գույքն են ապահովագրվում»: Քառյանը ընդգծեց, որ օրինագծի համաձայն յուրաքանչյուր ավտոշահագործողի համար պարտադիր է լինելու ապահովագրումը, իսկ եթե քաղաքացին հրաժարվի դրանից, ապա կենթարկվի պետական տուգանքի՝ մոտ 50 հազար դրամ. «Բացի սրանից, օրինագծի համաձայն, մեքենաները չեն կարող գրանցվել, եթե դրանց տերերը չներկայացնեն ապահովագրական վկայականները», ասաց Քառյանը: Նա տեղեկացրեց, որ օրինագծի ընդունումից հետո գործելու է հետեւյալ մեխանիզմը. Կենտրոնական բանկի եւ Հայաստանում գործող առնվազն երկու ապահովագրական ընկերությունների մասնակցությամբ ստեղծվելու է բյուրո, որը համակարգելու է ամբողջ աշխատանքները, կարգավորելու է ապահովագրության համար նախատեսված սակագների վերանայումները, դրանց փոփոխությունները, իսկ բյուրոյում ընդգրկված ընկերությունները պարտադիր պետք է ունենան իրենց ենթակառուցվածքները, առնվազն 1,5 մլրդ կապիտալ, քանի որ իրականացնելու են գործունեություն ամբողջ Հայաստանի տարածքում. «Ի դեպ, մեքենատերերի համար նախապես սահմանված են տարբեր սակագներ՝ ապահովագրում իրականացնելու համար՝ կապված մեքենայի, նրա շարժիչի հզորությունից, մեքենայի օգտագործման չափից եւ այլն: Ապահովագրությունը կարժենա միջինը 27-34 հազար դրամ», ասաց Քառյանը: Ապահովագրության համակարգը կունենա նաեւ երաշխիքային ֆոնդ եւ տեղեկատվական համակարգ, որը եւ կապահովի վիճակագրությունը, թե քանի՞ ավտոգույք ունենք վնասված եւ այլն: Ինչ վերաբերում է սահմանված ապահովագրական փոխհատուցումների չափին, ապա, Քառյանի խոսքերով դրանք կունենան հետեւյալ տեսքը. «Եթե վնասվել է միայն գույքը, ապա ընկերությունը կհատուցի 2 մլն դրամ, եթե կա մեկ զոհ, ապա՝ 4 մլն դրամ, եթե պատահարից կան մեկից ավելի զոհեր, ապա կփոխհատուցվի շուրջ 9 մլն դրամ»: Քառյանն ավելացրեց նաեւ, որ եթե գույքի վնասվածության վերականգնումը գնահատվում է ավելին քան 2 մլն դրամը, ապա ապահովագրական ընկերությունը, միեւնույնն է, կփոխհատուցի միայն 2 մլն-ը:

Փոխհատուցման ներկայացված չափերի վերաբերյալ Էդուարդ Հովհաննիսյանը նկատեց. «Եթե մենք հիմա ունենայինք վիճակագրական տվյալներ, թե որքան ավտոգույք է վնասվել մեր երկրում, այդ դեպքում այս թվերն ավելի հիմնավոր կլինեին»: Քառյանը համաձայնեց այս մտքին, եւս մեկ անգամ կրկնելով, որ ներկայացված թվերն ընդամենը նախնական են: Վերջինս, շարունակելով ներկայացնել օրինագիծը, տեղեկացրեց, թե նախատեսված է, որ վթարի պարագայում ապահովագրական ընկերության փորձագիտական աշխատանքները չեն կարող անցնել մեկ ամիս ժամկետը. «Դրանից հետո տվյալ ընկերությունը պարտավոր է 3 օրվա մեջ որոշում կայացնել՝ ենթակա՞ է տուժողը փոխհատուցման, թե՞ ոչ: Եթե ենթակա է, ապա ընկերությունը պարտավոր է 5 օրվա ընթացքում իրականացնել փոխհատուցումը», ասաց Քառյանը: Բանախոսը նաեւ ընդգծեց, որ վերջին ժամանակներում, հատկապես երիտասարդության շրջանակներում, ավելացել են մեքենաներն ապահովագրել ցանկացողները. «Հիմնականում թանկ մեքենաներ ունեցողները կամավոր դիմում են ապահովագրական ընկերություններ», նշեց Քառյանը:

Վերջում ապահովագրական ընկերության տնօրենն ընդգծեց, որ օրինագծում նախատեսված են նաեւ լուծումներ «ֆորսմաժորային» դեպքերի համար: Պատերազմական, այլ դրությունների դեպքում ապահովագրական ընկերությունը չի իրականացնի փոխհատուցում. «Չի իրականացվի փոխհատուցում նաեւ այն իրերի դիմաց, որոնք եղել են վթարի ենթարկված մեքենայում», եզրափակեց Արա Քառյանը:

Իսկ «Աքիլլեսի» նախագահ **Էդուարդ Հովհաննիսյանը**, օգտվելով առիթից, անդրադարձավ վարորդ-ճանապարհային ոստիկան հարաբերություններին: Պատասխանելով մեր հարցին՝ Հովհաննիսյանը շեշտեց, որ ավտոտեսուչն իրավունք չունի մեքենայի վրայից հանելու պետհամարանիշը. «Բայց ճանապարհային ոստիկանության պետը եթերներից հայտարարում է, օրենք ենք խախտում, լավ ենք անում՝ դրանով կարգ ու կանոն ենք հաստատում: Հիմա ի՞նչ, վարորդն է՞լ ասի՝ օրենք եմ խախտում, լավ եմ անում», նշեց Հովհաննիսյանը: Առհասարակ վերջինս խորհուրդ տվեց վարորդներին, երբ տեսուչը կանգնեցնում է նրանց, իսկ այդպիսի իրավունք տեսուչն ունի միայն բացահայտ խախտման դեպքում, ձայնագրեն իրենց խոսակցությունը ոստիկանի հետ. «Իսկ եթե կազմվում է արձանագրություն, ապա անպայման հետեւեք, որ դրա մեջ լինեն, օրինակ լուսացույցերի լավ չերեւալու փաստերը, եթե, իհարկե, այդ փաստը կա», եզրափակեց Հովհաննիսյանը:

ՀՈՎԻԿ ԱՓՅԱՆ

**Հ. Գ.- Մեզ մնում է միայն հուսալ, որ ավտոմեքենաների պարտադիր ապահովագրության օրինագիծը հաստատվելու եւ 2011-ի հունվարի մեկից գործելուց հետո հանկարծ ականատես չենք լինի «հայկական խաբեության», որը բավական տարածված է, օրինակ, Ռուսաստանում: Երբ վարորդը «սարքում» է սեփական մեքենայի վթարը՝ ապահովագրական ընկերությունից դրամ կորզելու նպատակով:**

ԿԱՊԵՐ

# «Հայերն ու լեհերը մեծ վստահություն ունեն միմյանց նկատմամբ»

## *Երկու երկրների վարչապետները խոսեցին կոնկրետ պայմանավորվածությունների մասին*

**Հայաստանում պաշտոնական այցով գտնվող Լեհաստանի նախարարների խորհրդի նախագահ Դոնալդ Տուսկը եւ Հայաստանի վարչապետ Տիգրան Սարգսյանը կառավարությունում տեղի ունեցած բանակցություններից հետո լրագրողների առջեւ հանդես եկան հայտարարություններով:**

**Տիգրան Սարգսյանը**, վկայակոչելով հայ-լեհական ավանդական բարեկամական կապերը, դրանք նպաստավոր հիմք համարեց հարաբերությունների խորացման համար: Նա տեղեկացրեց, որ կողմերը ստորագրել են տնտեսական համագործակցության պայմանագիր: Բացի այդ, որոշվել է ստեղծել հայ-լեհական միջկառավարական հանձնաժողով, որտեղ քննարկվելու են երկկողմ տնտեսական, քաղաքական, մշակութային եւ այլ հարցեր: Հայաստանի վարչապետի հավաստմամբ, ձեռք են բերվել պայմանավորվածություններ կոնկրետ բիզնես ծրագրերի վերաբերյալ, որոնք կքննարկվեն միջկառավարական հանձնաժողովում:

**Դոնալդ Տուսկն** իր հերթին այն կարծիքը հայտնեց, որ հայերն ու լեհերը շատ մեծ վստահություն ունեն միմյանց նկատմամբ, ինչն էլ առիթ դարձավ, որ Լեհաստանը մշակի Եվրոպական համագործակցության ծրագիրը, որտեղ Հայաստանը շատ մեծ ջանք ու եռանդ է գործադրում: Լեհաստանի նախարարների խորհրդի նախագահը տեղեկացրեց նաեւ, որ հայկական կողմի հետ համագործակցության մի քանի դաշտեր են բացվել, մասնավորապես քիմիական արդյունաբերության եւ էներգետիկայի բնագավառներում:

Հայաստանում Լեհաստանի դեսպանատան տրամադրած տվյալներից տեղեկացանք նաեւ, որ հայ-լեհական առեւտրային հարաբերությունները հատկապես նկատելի աճ են ունեցել 2008-ին, իսկ 2009-ին՝ ճգնաժամով պայմանավորված, որոշ չափով նվազել: Համաձայն այդ տվյալների, 2009-ի 11 ամիսներին Հայաստանից Լեհաստան է արտահանվել 18,2 մլրդ դրամի ապրանք, Լեհաստանից Հայաստան՝ 1,8 մլրդ դրամի: Դրական տարբերությունը հօգուտ Հայաստանի կազմել է 16,3 մլրդ դրամ: Անցած տարիներին Լեհաստանի հետ առեւտրային հարաբերությունների տարբերությունը հիմնականում հօգուտ Հայաստանի է եղել: Մեր երկրից Լեհաստան են արտահանվում կաուչուկ եւ մոլիբդեն, հակառակ ուղղությամբ ներմուծվում են սննդամթերք, ծխախոտ, կահույք եւ փայտե իրեր, տարբեր սարքավորումներ՝ սառնախցիկներ, վառարաններ, ջրատաքացուցիչներ, քիմիական ապրանքներ՝ դեղորայք եւ կոսմետիկա:

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

# Բերդում կգործի գինենյութի հնացման արտադրամաս

«Արվելու է ամեն ինչ, որ մի ճութ խաղող չմնա գետնին ու աճեցրածն իրացվի», Երեւանի կոնյակի գործարանի գործադիր տնօրեն **Արա Գրիգորյանի** այս հայտարարությունը Բերդի մասնաճյուղում թորման արտադրամասի բացման համատեքստում էր, որ տեղի ունեցավ երեկ Տավուշի մարզպետ **Արմեն Ղուլարյանի**, Բերդի քաղաքապետ **Անդրանիկ Շառյանի**, գործարանի արտադրության տնօրեն **Ֆիլիպ Թիբոյի** մասնակցությամբ:

Նախկինում Բերդի մասնաճյուղում միայն խաղող էր մթերվում, իսկ գինենյութը տեղափոխվում էր սպիրտ թորելու համար: 2009-ին, չնայած ֆինանսատնտեսական ճգնաժամի ազդեցությանը, կոնյակի գործարանը Տավուշի մարզում մթերել է ավելի քան 2 հազար 800 տոննա խաղող, 1 կգ-ը՝ 120 դրամով: Գործարանի գործադիր տնօրենի ներկայացմամբ, հաշվի առնելով Տավուշի մարզի սահմանամերձ լինելը, կարեւորում է այստեղ գործունեությունը, եւ մարզի խաղողագործությամբ զբաղվող մոտ 5 հազար 500 տնտեսությունների մի զգալի մասն էլ գործարանի հետ աշխատում է պայմանագրային հիմունքներով:

Տավուշի մարզպետ Արմեն Ղուլարյանն իր հերթին կարեւորեց Բերդի մասնաճյուղի գործունեությունը մարզի համար: Մարզպետի խոսքերով, պայմանագրով խաղողի աճեցումը նպաստում է, որ մարդիկ վերադառնան՝ մշակելու խոպան մնացած հողերը:

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Տավուշ

# Հասարակության ձայնը Հանրային խորհրդում լսելի չէ

**Կարելի է ընդամենը մեկ արտահայտությամբ բնութագրել Հանրային խորհրդի մեկ տարվա աշխատանքը՝ ոչինչ, բացի դատարկ խոսքերից: Մեկ տարի շարունակ խորհրդի անդամները զբաղված են եղել միայն անարդյունք կարծիքների փոխանակմամբ, հետեւաբար զարմանալի չէ, որ վստահություն այդ կառույցի նկատմամբ այդպես էլ չձեւավորվեց եւ դրանում չի կարելի պատճառ փնտրել հասարակության դժգոհողի կեցվածքը:**

**Նախագահի ցանկությամբ ու նախաձեռնությամբ ստեղծված կառույցը պետք է դառնար հանրության լսափողը: Կառույցի անկախության հարցը հենց սկզբից տարակուսանքի առիթ տվեց, ու թեպետ քննարկումների ժամանակ խորհրդի անդամները հավաստացած էին, որ այլ երկրների օրինակով Հայաստանում էլ Հանրային խորհուրդն իր դերը կունենա, սակայն դրան, բացի իրենցից՝ խորհրդի անդամներից, որեւէ մեկը կարծես չէր հավատում:**

**Սկզբում խորհուրդը սկսեց բուռն աշխատանք. կազմակերպվեցին քննարկումներ, ստեղծվեցին հանձնաժողովներ, խոսեցին, պատմեցին, ասուլիսներ հրավիրեցին, բայց...:**

**Մեկ տարվա ընթացքում չեմ հիշում մի դեպք, երբ Հանրային խորհրդի որեւէ անդամ խոսեր ինչ-որ պրոբլեմից, իշխանությունների կարծիքին հակառակ ինչ-որ բան հայտարարեր, կամ ներկայացներ հասարակության տեսակետը:**

**Սկսած երկրի արտաքին եւ ներքին քաղաքականությունից մինչեւ սոցիալ-տնտեսական հարցեր խորհրդի անդամները համամիտ էին այն դիրքորոշմանը, որ հայտնում էր իշխանությունը: Խնդիրն այստեղ այն չէ, որ խորհուրդը պետք է անպայման դառնար ընդդիմադիր ու իշխանությանը քննադատեր, սակայն իր առաքելությունն էր՝ լսելի դարձնել հանրության ձայնը, որն այդպես էլ չկատարեց: Հանրության ձայնը խորհրդում չէր լսվում, երբ ոսկու շուկայի աշխատակիցներն էին բողոքում, երբ գազի գինն էր բարձրանում, երբ սննդի ու տնտեսական ապրանքների գները շարունակ բարձրանում են, այս ցուցակը կարելի է երկար թվել: Իսկ եթե ինչ-որ մի հարց էլ Հանրային խորհուրդը քննարկել է, ապա միայն արտահայտելու իշխանության կարծիքը:**

**Հետեւաբար, անհասկանալի է Հանրային խորհրդի գոյությունը: Ու թեպետ խորհրդի անդամները հարգված քաղաքական-հասարակական գործիչներ են, մտավորականներ, պետք է փաստել, որ մեկ տարվա ընթացքում Հանրային խորհրդի աշխատանքը արդյունք չի տվել:**

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# Ճշտվել են ադրբեջանցի դիվերսանտների անունները

*1-ին էջից*

Նույն օրը՝ ավելի ուշ, ժամը 21-ի սահմաններում, Կոթի գյուղի մոտակայքում նկատվում է Ադրբեջանից ներթափանցած օտարական (?)

Նույն օրը՝ ավելի ուշ, ժամը 21-ի սահմաններում, Կոթի գյուղի մոտակայքում նկատվում է Ադրբեջանից ներթափանցած օպտիկական նշանառության սարքերով, ինքնաձիգներով զինված եւ սեւ քողարկիչ համազգեստով հանդերձավորված 3 հոգուց բաղկացած եւս մեկ խումբ, որը շարժվում էր դեպի մոտակա անտառը:

Դեպքերի վերլուծությունը ցույց է տալիս, որ այդ խումբը գործել է թիկունքից ապահովող մեկ այլ խմբի կրակային աջակցությամբ: Հայկական կողմի ձեռնարկած գործողություններից ադրբեջանցի զինյալները, կորուստներ կրելով, նահանջել են՝ չեզոք գոտում թողնելով երկու դիակ: Սպանված ադրբեջանցիներից մեկի դիակը մարտի 5-ի առավոտյան ժամը 6-ի սահմաններում չեզոք գոտուց տեղափոխվել է ՀՀ տարածք:

Ընդհանուր առմամբ, մարտի 3-ին ձեռնարկված միջոցառումներով սպանվել է Ադրբեջանի տարածքից ներթափանցած 3 զինյալ, որոնցից 2-ի դիակները գտնվում են Հայաստանում: Վիրավորվել է մեկ անձ՝ Իբրահիմ անունով, ում հաջողվել է հասնել Ադրբեջանի տարածք:

Օպերատիվ ճանապարհով ճշտվել են նաեւ ադրբեջանական զինյալներից եւս մի քանիսի անունները՝ Վելիեւ Վալի, Նամազով Սագիֆ՝ Կյոսալար գյուղից, ոմն Նիզամի եւ Խազանի:

Հայկական կողմում գտնվող 2 դիակներից մեկի՝ Հասանի բջջային հեռախոսի մեջ կան տարբեր տեսագրություններ՝ շահիդի թաղման արարողության, Ղազախի ներքին զորքերի ստորաբաժանումների հատուկ պատրաստության եւ ազանների՝ կրոնական արարողության վերաբերյալ: Հասանի բջջային հեռախոսում կային նաեւ լուսանկարներ, որոնք, ըստ երեւույթին, նրա հարազատներն են:

Չի բացառվում, որ սպանված սահմանախախտները «վահաբականության»՝ ծայրահեղ արմատական իսլամիստական կազմակերպության ներկայացուցիչներ էին: Նրանց մոտ հայտնաբերված անձնական իրերն ու մարմնի տարբեր մասերում առկա դաջվածքները հիմք են տալիս ենթադրելու, որ նրանք առնչություն են ունեցել Ադրբեջանի հատուկ ծառայությունների հետ եւ անցել են հատուկ պատրաստություն» ասված է ՀՀ ՊՆ հայտարարության մեջ:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԺԸ տարի

Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
**www.azg.am**

Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635

Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221

Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960

Լրագրողների սենեակ / հեռ 581841

Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483

***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն*** / հեռ 529353

Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի: Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

ԱԶԳ

## Անցուդարձ

# Առանց Ղարաբաղի ոչ «տաք» է, ոչ «սառը»




*Ժոաո Սուարեշ եւ Աշոտ Ղուլյան*

ԼՂՀ տարբեր պաշտոնյաներ բազմիցս են հայտարարել եւ շարունակում են հայտարարել, որ առանց Ղարաբաղի «խոսքի» անհնար է լուծում տալ 16 տարի ձգվող ղարաբաղյան հակամարտությանը: Համաձայնենք, անտրամաբանական էլ կլինի, որոշել Ղարաբաղի կարգավիճակը (թեեւ այն 16 տարի է, ինչ որոշված է-Հ.Ա.) առանց ղարաբաղցիների կարծիքը հաշվի առնելու: Իսկ այդ կարծիքն ակնհայտ է. Ղարաբաղի բնակչության ճնշող մեծամասնություն հայերը, հանդիպելով իրենց գոյատեւման համար լուրջ սպառնալիքների, իրենք են որոշել անկախ ապրել եւ ստեղծել անկախ պետություն, որը շատ եւ շատ, նկատենք՝ միջազգային ցուցանիշներով, ավելի բարձր դիրքերում է, քան Ադրբեջանը:

«**Ազգ**»-ը գրել էր, որ Երեւան այցելած ԼՂՀ նախագահ **Բակո Սահակյանը**, ինչպես նաեւ ԼՂՀ ԱԺ-ի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահ **Վահրամ Աթանեսյանը** բացառում են ղարաբաղյան հակամարտության լուծման որեւէ տարբերակ, եթե այստեղ չի երեւում Արցախի «խոսքը»: Իսկ որպես խնդրի լուծում համանախագահների առաջ քաշած մադրիդյան սկզբունքները կամ դրանց նորացված տարբերակը Ղարաբաղում ոչ ոք չի ստացել, սակայն ղարաբաղցի պաշտոնյաները հայտարարում են, որ, իհարկե, տեղյակ են դրանց: «Ղարաբաղյան կողմը չի ստացել մադրիդյան սկզբունքները, սակայն մենք տեղյակ ենք դրանց, այստեղ մեծ գաղտնիք էլ չկա», երեկ ԵԱՀԿ ԽՎ-ի նախագահ Ժոաո Սուարեշի հետ հանդիպումից հետո հայտարարեց ԼՂՀ ԱԺ նախագահ **Աշոտ Ղուլյանը**: Վերջինս ավելացրել է, թե հնարավոր է, որ մարտի վերջին Մինսկի խմբի համանախագահները տարածաշրջան կատարելիք այցի ընթացքում Ստեփանակերտին ներկայացնեն վերջապես մադրիդյան սկզբունքները: Հիշեցնենք, ինչպես երեկվա համարում գրել էր «**Ազգ**»-ը, Ռուսաստանի ԱԳՆ-ի ներկայացուցիչ **Անդրեյ Նեստերենկոն** էր հայտարարել, որ համանախագահները «մարտի վերջին կամ ապրիլի սկզբին կժամանեն տարածաշրջան, կլինեն նաեւ Ստեփանակերտում»: Կներկայացնե՞ն նրանք հակամարտության «հիմնական գործող անձին»՝ Ղարաբաղին, մադրիդյան նորացված սկզբունքները, թե՞ ոչ, ցույց կտա ժամանակը, սակայն մի բան ակնհայտ է. «ղարաբաղյան հակամարտության լուծման միակ ձեւը Ղարաբաղի ներկա կարգավիճակի միջազգային ճանաչումն է», ինչպես օրեր առաջ հայտարարել էր ԼՂՀ ԱԺ արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահը:

Իսկ ԵԱՀԿ ԽՎ-ի ղարաբաղյան հակամարտության հարցով հատուկ ներկայացուցիչ **Գորան Լենմարկերի** վերջերս Երեւանում արած այն հայտարարությունը, թե ինքը տեսնում է խնդրի արագ կարգավորման անհրաժեշտություն, ԼՂՀ ԱԺ նախագահը այսպես է մեկնաբանել. «Երեւի նկատել եք, որ նա (Լենմարկերը) ամեն տարի հայտարարում է, թե այդ տարին վճռորոշ կլինի, բայց գործընթացն այդ հայտարարություններից ոչ շահում է, ոչ տուժում»: Իսկ գործընթացը, Ղուլյանի խոսքերով, կշահի միայն բանակցային գործընթացում Ղարաբաղի մասնակցությամբ. «Այս մասին ես նշել եմ Ժոաո Սուարեշին», ասաց Ղուլյանը: Ի դեպ, Ղուլյան-Սուարեշ հանդիպումը նախատեսվածից մի փոքր ավելի տեւեց, հանդիպումից հետո Սուարեշը, չցանկանալով պատասխանել լրագրողների հարցերին, անմիջապես հեռացավ, իսկ Աշոտ Ղուլյանը որակեց որպես «շատ օգտակար հանդիպում». «Պարոն Սուարեշի հետ մենք խոսեցինք նաեւ ԼՂՀ ներքին եւ արտաքին իրավիճակի, հակամարտության կարգավորման մեր մոտեցումների շուրջը», նշեց Ղուլյանը: Հանդիպման ընթացքում անդրադարձ է եղել նաեւ Բաքվից հնչող ռազմական կոչերին. «Ես հայտնել եմ, որ հակամարտության սկզբից մինչեւ այսօր Ադրբեջանի դիրքորոշման մեջ որեւէ փոփոխություն չի եղել: Իսկ այդ սպառնալիքները, բնականաբար, մեր կողմից ընկալվում են որպես թշնամական գործողություններ», ասաց ԼՂՀ ԱԺ նախագահը: Ղուլյանը տեղեկացրեց նաեւ, որ Սուարեշը խոստացել է տարածաշրջան կատարելիք հաջորդ այցի ժամանակ անպայման այցելել նաեւ Ղարաբաղ:

ՆՈՎԻԿ ԱՓՅԱՆ

**ՀԻԼԱՐԻ ՔԼԻՆԹՈՆԻ ՄԱՏՈՒՑՄԱՄԲ**

# «Հայաստանում ստեղծված քաղաքական ճգնաժամը շարունակում է լարված պահել մթնոլորտը երկրում»

## *Ասված է ԱՄՆ պետքարտուղարության զեկույցում*

Մարտի 11-ին ԱՄՆ պետքարտուղար **Հիլարի Քլինթոնը** ներկայացրել է պետքարտուղարության՝ «Մարդու իրավունքները 2009-ին» զեկույցը: Հայաստանի մասով, «Ազատություն» ռադիոկայանի փոխանցմամբ, զեկույցում նշված է, որ 2008-ի նախագահական ընտրությունների եւ տասը մարդու մահվան հանգեցրած հետընտրական բախումների հետեւանքով Հայաստանում ստեղծված լարված քաղաքական ճգնաժամը շարունակում է լարված պահել մթնոլորտը երկրում: «Սամվել Նիկոյանի ղեկավարած խորհրդարանական ժամանակավոր հանձնաժողովը, որը կոչված էր ուսումնասիրելու հետընտրական զարգացումները, սեպտեմբերի 16-17-ին հրապարակել է զեկույց, որում կա քննադատություն ե՛ւ ընդդիմության, ե՛ւ իշխանության հասցեին, սակայն բռնությունների եւ բախումների համար հիմնականում պատասխանատու է համարվում նախկին նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի առաջնորդած ընդդիմությունը: Տարվա ընթացքում ճգնաժամը չի կարգավորվել, գրանցվել են մարդու իրավունքների ոտնահարման նոր դեպքեր: Իշխանությունները սահմանափակել են կառավարությունը ազատ եղանակով փոխելու քաղաքացիների իրավունքը մայրաքաղաք Երեւանի ավագանու ընտրություններում,- նշում են պետքարտուղարության հրապարակած զեկույցի հեղինակներն ու հավելում,- 2009-ի ընթացքում իշխանությունները հետապնդել են քաղաքական ընդդիմախոսներին, կամայական ձերբակալություններ են կատարել, մարդկանց երկար ժամանակով պահել են նախնական կալանքի պայմաններում, կիրառել են ընդդիմախոսներին բյուրոկրատական մեթոդներով ահաբեկելու կամ նրանցից վրեժ լուծելու գործելակերպ: Իշխանություններն ուժ են գործադրել քաղաքական ցույցերի մասնակիցների դեմ եւ խափանել են դրա վերաբերյալ տեղեկատվություն տարածելու քաղաքացիների փորձերը: Ոստիկանները ծեծի են ենթարկել ձերբակալվածներին, ազգային անվտանգության ծառայության գործակալների եւ ոստիկանների կողմից մարդկանց իրավունքները խախտելու դեպքերն անպատիժ են մնացել: Ամբաստանյալներին զրկել են արդար դատավարության հնարավորությունից», ասված է զեկույցի Հայաստանին վերաբերող մասում:

Այնուհետեւ անդրադառնալով լրատվամիջոցների աշխատանքին՝ նշվում է. «Լրատվամիջոցներին եւ հատկապես հեռարձակվող լրատվամիջոցներին բնորոշ է ինքնագրաքննության բարձր աստիճան: Իշխանությունները սահմանափակում են մամուլի բազմակարծությունը, ինչի վկայություններից մեկը հեռարձակման արտոնագրերի տրամադրման սառեցումն է: Գրանցվել են լրագրողների վրա հարձակումների նոր դեպքեր»:

Զեկույցում նշված է նաեւ, որ Հայաստանում շարունակվում է համատարած կոռուպցիան, իսկ իշխանությունները չեն դիմում վճռական քայլերի այն հաղթահարելու համար: Հիլարի Քլինթոնը, սակայն, ընդգծել է, որ ներկայումս ամբողջ աշխարհում են նկատվում մարդու իրավունքների լուրջ սահմանափակումներ, որը Քլինթոնը որակել է մտահոգիչ:

Հ. Ա.

# Ո՞ւմ համար են ադրբեջանական դեսպանության ստերը

*1-ին էջից*

Այդ տարիներին Չեխիայում ոչ միայն հայկական համայնք չկար, այլեւ դեսպանություն: Ուստի Դանան չէր կարող կաշառվել վիրտուալ հայ համայնքի կողմից: Ավելին, Դանան մինչեւ հիմա ոչ մի հակաադրբեջանական արտահայտություն իրեն թույլ չի տվել: Նա ընդամենն ասել է՝ «Մի կեղծեք պատմությունը, գոնե այն նկարներն ու կադրերը, որոնց բնօրինակները ես տեսել եմ»: Եթե հետեւենք Ադրբեջանի դեսպանի տրամաբանությանը, ապա ճշմարտություն ներկայացնող բոլոր լրագրողները հայ են: Իհարկե, դեսպանը եւ իրեն կից գործող ադրբեջանական համայնքը՝ հանձին Ազեր-Չեխ կազմակերպության, ամեն ցնդաբանություն պետք է տարածեն, որպեսզի պաշտոնական Բաքվի առաջ արդարանան, թե որտեղ են ծախսվել հակահայ քարոզչության համար ստացված գումարները: Ու քանի որ իրենք ձախողել են իրենց վստահված միջոցառումը, թյուրիմացության մեջ են գցել նաեւ Լիդիցե գյուղի գյուղապետին եւ հուշահամալիրի տնօրենին, որոնք նույնիսկ չգիտեին, որ Խոջալուն գտնվում է հայկական ուժերի վերահսկողության տակ:

Այժմ Պրահայում Ադրբեջանի դեսպանությունը փորձում է իր ոչ պրոֆեսիոնալ աշխատանքը բարդել չեխ լրագրողուհու եւ հայկական համայնքի, այդ թվում եվրոպական «Օրեր» ամսագրի վրա: Մեր ամսագիրն, այո՛, աշխատել է թույլ չտալ կեղծիքի տարածումը:

Ադրբեջանի դեսպանն, իր դիվանագիտական գործունեությունը թողած, Չեխիան դարձրել է հակահայկական գործունեության թատերաբեմ: Դա զգացվել է նրա՝ Պրահայում հաստատվելու առաջին իսկ օրերից, քանզի նրա աշխատանքի հիմնական նպատակը եղել է հակահայկական ձեռնարկների կազմակերպումը:

Երբ «Ֆոտոարթ» ամսագիրը Արցախին նվիրված չեխ լուսանկարիչների աշխատանքների ցուցահանդես կազմակերպեց՝ առանց որեւէ քաղաքական մեկնաբանությունների, երաժշտական ելույթներով եւ պատկերագրքի շնորհանդեսով, ցուցադրելով հասարակ ժողովրդի կյանքը դաժան պատերազմից հետո, ադրբեջանցիները ցուցահանդեսի դռների մոտ Խոջալուի մասին պատմող կեղծ լուսանկարների ու պլակատների հակում կազմակերպեցին, սակայն միանգամից հեռացան՝ երբ հայերից մեկը ադրբեջաներենով մի քանի քաղցր խոսք ասաց նրանց: Մոռանալով այս դիպվածը, օրերս «Չեխական ռադիոյին» Ազեր-Չեխ կազմակերպության նախագահ **Էլշան Նազարովն** ասել է, թե իրենք երբեք չեն փորձել խանգարել հայկական միջոցառումները: Նազարովը, որն ըստ Բաքվից մեզ հասած տեղեկությունների, շատ հակասական անցյալ ունի, այսօր զարմանում է հայկական կողմի նման վերաբերմունքից: Իրենց թվում է, որ եթե 2007-ին աննկատ նման մի միջոցառում Լիդիցեում անցկացրին, ապա կարող են կեղծիքների տարածումը շարունակել:

Այժմ պարզենք, թե ո՞րն է ադրբեջանական կողմի նպատակը: Դեսպանը գործուղվել է Չեխիա երկկողմ դիվանագիտական կապերով զբաղվելո՞ւ, թե՞ երրորդ երկրի ժողովրդի նկատմամբ թշնամանք սերմանելու համար: Ընդ որում, չեխական մի քանի բարձրաստիճան պաշտոնյաներ մեզ ասել են, որ Ադրբեջանի դեսպանը հակահայկական գրականություն է տարածում չեխական իշխանությունների շրջանում: Ի դեպ, Պրահայում բնակվող հայերն ու ադրբեջանցիները չեզոք հարաբերություններ ունեին մինչեւ դեսպանի Պրահա գալը: Նրա գալուց հետո նույնիսկ չեխական դպրոցներում ադրբեջանցի երեխաները հայազգի դասընկերներին իրենց ապագա վրեժխնդրությամբ են սպառնում: Սա է պատկերը: Իսկ ամենանողկալին այն է, որ հայերի դեմ պայքարող դեսպանն իր տիկնոջ հետ եկել էր Պրահայում Հայաստանի դեսպանության գրասենյակի ղեկավարի հրաժեշտի ընդունելությանը՝ ծաղկեփնջով եւ լայն բացված ժպիտով: Հայերի հետ ողջագուրվելիս երեւի «մոռացել էր», որ ինքը գործուղված է հակահայկական աշխատանք տանելու համար:

Ավելին, հայերին փիառ-ակցիաների մեջ մեղադրող դեսպանն, ինքն էր Լիդիցեն դարձրել նման փիառկենտրոն՝ զոհերի հիշատակին խնջույք կազմակերպելով հուշահամալիրի ռեստորանում: Երեւի այնքան մեծ էր ադրբեջանական խորտիկներ ուտելու գյուղի բնակչության գայթակղությունը, որ հայ համայնքի ներկայացուցիչներիս եւ Հայաստանի դեսպանի հետ հանդիպման ընթացքում Լիդիցեի գյուղապետը հատուկ շեշտեց, որ եթե չեխական արտգործնախարարությունն արգելի միջոցառումը, հյուրասիրությունը, միեւնույնն է, կլինի: Այնժամ պարզ է, թե ովքեր են կաշառում եւ ինչպես, նույնիսկ չհարգելով Լիդիցեի զոհերի հիշատակը:

Ինչ վերաբերում է ստորագրված փաստաթղթերին: Նախ նշենք, որ ամբողջ ակցիայի հետեւում կանգնած է ոչ թե գյուղապետը, այլ Լիդիցեի հուշահամալիրի տնօրենը: Այս մասին մի անգամ գրել ենք, սակայն Ադրբեջանի դեսպանի համար հատուկ կրկնում ենք: Հուշահամալիրի տնօրենն անձամբ «Օրեր» ամսագրին հայտնել է, որ երկու գյուղերի միջեւ ոչինչ չի ստորագրվել: Այդ հուշագիրը, միջոցառումից երկու օր անց, ադրբեջանական կողմի հետ ստորագրել է հուշահամալիրի տնօրենը՝ մշակութային համագործակցության եւ ցուցահանդեսների փոխանակման մասին: Ի դեպ, նման համագործակցություն առաջարկվել է նաեւ մեզ՝ հայկական կողմին:

Իսկ ադրբեջանական միջոցառմանը հրաժարվել են մասնակցել Չեխիայի պաշտոնական անձինք: Այս մասին «Չեխական ռադիոյին» հաստատել է նաեւ հուշահամալիրի տնօրեն **Միլոշ Չերվենցլը**:

Ինչ վերաբերում է ադրբեջանական դեսպանության տարածած այն մտքին, թե Լիդիցեին ավելի մոտ էր Խոջալուի ողբերգությունը, ապա այդ դեպքում առնվազն պետք էր հիշել գոնե Ղարաբաղյան պատերազմի ադրբեջանական սանձազերծումից առաջ Սումգայիթում, Կիրովաբադում եւ Բաքվում գազանաբար ոչնչացված հայ ընտանիքներին: Իսկ ինչ վերաբերում է ողբերգությունների նմանությանը, ապա մեջբերենք մի հետաքրքրական զուգադիպություն: Լիդիցեի ողբերգությունը կազմակերպած նացիստներից մեկը՝ Կոնստանտին ֆոն Նոյրաթը, ով մինչեւ 1943 թվականը փաստացի եղել է Բոհեմիայի եւ Մորավիայի պրոտեկտորը, Նյուրնբերգյան դատավարության ժամանակ դատապարտվել է նաեւ չեխական Լիդիցե գյուղի բնակչության ոչնչացման համար: Ըստ անվանի գրող Ալեքսանդր Թոփչյանի հրապարակած փաստերի, այս նույն մարդը 1915 թվականի Հայոց ցեղասպանության ժամանակ եղել է Կոստանդնուպոլսում կայզերական Գերմանիայի հյուպատոսը, ով անհետեւանք է թողել իր միջնորդությամբ հայ մեծանուն պոետ եւ բժիշկ Ռուբեն Սեւակի կյանքը փրկելու նրա կնոջ խնդրանքը: Թուրքական բարբարոսությունները յուրացրած նացիստը հետագայում դրանք կիրառել է Լիդիցեում:

Ադրբեջանի դեսպանությունը Day.az-ին տված մեկնաբանությունը հասցրել է զավեշտի, նշելով, թե **Դանա Մազալովայի** Լիդիցեի միջոցառման ժամանակ ունեցած մերկացնող ելույթն իբր գյուղացիների վրա շատ վատ տպավորություն է թողել, եւ դեռ այդ մասին նրանք տեղեկացրել են գյուղի մյուս բնակիչներին: Երեւի դեսպանը գյուղում տուն առ տուն անցել եւ սոցիոլոգիական հարցում է անցկացրել: Ո՞վ է օտար դիվանագետին թույլ տվել չեխերի մի մասին տրամադրել մյուսի դեմ:

Եվրոպայում միայն նավթագումարներով խնջույք անցկացնելը եւ հարեւաններին վատաբանելը բավարար չէ: Փաստեր են պետք, ՓԱՍՏԵՐ:

*Հ.Գ. Ի դեպ, մենք եղանք Լիդիցեում, ուր ժամկետից շուտ հանվել էր ադրբեջանական լուսանկարների ցուցադրությունը: Եվ չնայած ադրբեջանցիները «Վիկիպեդիա» ինտերնետային հանրագիտարանում զետեղել են, որ Խոջալուն Լիդիցեին քույր քաղաք է, բայց գյուղի իշխանություններն արդեն քանիցս հերքել են, որ հետ են կանգնել այդ ծրագրից:*

AZG NEW PDF.qxd 12/03/2010 22:10 Page 1



# Ի՞նչ եղավ Uriah Heep խմբի համերգի հասույթը

## Չստացված բարեգործությո՞ւն, թե՞ վատ մենեջերություն

Անցյալ տարի մի քանի շաբաթ շարունակ «Շանթ» հեռուստաընկերության եթերում անընդհատ կրկնվում էր գովազդային մի տեսահոլովակ. «Իր 15-ամյակի կապակցությամբ հեռուստաընկերությունը նվեր է պատրաստել ռոքի բոլոր սիրահարներին. Հայաստանում բացառիկ համերգով հանդես է գալու հանրահայտ Uriah Heep խումբը»: Տեսահոլովակում նաեւ հայտարարում էին, որ համերգը բարեգործական է եւ ստացված ողջ հասույթն ուղարկվելու է Գյումրի:

Թե ինչպես ու կոնկրետ ի՞նչ նպատակների համար էր ծախսվելու գումարը՝ չէր հաղորդվում:

Համերգից անցել է 5 ամիս, սակայն բարեգործական ծրագրերի, համերգի հասույթի մասին կազմակերպիչները լռում են: Թե որքա՞ն է կազմել համերգի հասույթը, ի՞նչ են անելու ու նմանատիպ բազմաթիվ հարցերի պատասխանը հեռուստաընկերությունն այդպես էլ որեւէ հաղորդման ընթացքում չպարզաբանեց: Հետեւաբար, կարծիքը, թե կամ համերգը կազմակերպվել էր բարեգործականի շղարշի տակ ոմանց վարկանիշը բարձրացնելու նպատակով, կամ էլ մենեջերներն այնքան պրոֆեսիոնալ չեն եղել ու ծրագրերը ձախողվել են, չափազանցություն չէ: Եթե համերգը ձախողվել էր, կարող էին ներկայացնել համերգի տոմսերի, հանդիսատեսի քանակի վերաբերյալ որոշակի թվեր ու այդ կերպ որոշակի պարզաբանում տալ: Բայց այդպես չեղավ:

Թե որքան է կազմել Uriah Heep խմբի համերգի հասույթը կամ որքան տոմս է վաճառվել՝ «Շանթ» հեռուստաընկերության ներկայացուցիչ **Անդրեյ Սիմոնյանը** տեղյակ չէ: «Ես ընդամենը համերգի կազմակերպիչն եմ ու զբաղվել եմ այդ հարցով: Ֆինանսական, հաշվապահական գործերով չեմ զբաղվում ու չգիտեմ, թե որքան է կազմել համերգի հասույթը: Դրանից հետո ոչ մի բանից տեղյակ չեմ», «**Ազգ**»-ի հեռախոսազրույցում ասաց նա: Սիմոնյանի տեղեկացմամբ, բացի «Շանթ» հեռուստաընկերությունից, համերգի կազմակերպչական աշխատանքներով զբաղվել է նաեւ «Վիբրոգրաֆուս» ստուդիան, եւ հենց այնտեղ պետք է փնտրել հարցի պատասխանը: Ստուդիայի հիմնադիր **Վարդան Գրիգորյանն** էլ չհիշեց, թե որքան է կազմել համերգի հասույթը: Պատճառաբանությունը՝ պարզ, հասարակ ու անհիմն. երկար ժամանակ է անցել, թվերը մտքից թռել են: «Էնքան ժամանակ է անցել, հիմա ուրիշ գործերով ենք զբաղվում ու կոնկրետ թիվ չեմ կարող ասել», ասաց նա:

Վերջինիս խոսքերով՝ իրենք նպատակ են ունեցել Հայաստանում ռոք երաժշտություն տարածելուց զատ ծավալել նաեւ բարեգործական գործունեություն, բայց ծրագրերը խառնվել են. համերգից հետո ոչ թե շահույթ են ունեցել, այլ, ընդհակառակը, վնաս: Համերգի ժամանակ ծախսերն այնքան շատ են եղել, որ մի բան էլ իրենց գրպանից են ավելացրել: Գրիգորյանը չի հիշում նաեւ, թե որքան տոմս է վաճառվել, մինչդեռ ֆինանսական գործերով զբաղվող կազմակերպիչը պետք է առաջնահերթ հենց դա հիշի: Այսպիսի մի խոսք կա՝ լավ հաշվապահը կամ մենեջերն իր անունից լավ հիշում է գործարքի հետ կապված յուրաքանչյուր թիվ: Փաստորեն վերոնշյալ կազմակերպությունը լավ հաշվապահի ու մենեջերի խնդիր ունի:

Համերգի տոմսերը, որ սկսվել են 10.000 դրամից ու բարձրացել մինչեւ 50.000 դրամ, ըստ Գրիգորյանի, չեն վաճառվել: Վերջին օրն իրենք անգամ տոմսեր են նվիրել երաժիշտներին, որ անվճար ծանոթներին հրավիրեն համերգ: Բայց դա էլ չի օգնել. հոկտեմբերի 16-ին մարզահամերգային համալիրի համերգային դահլիճը, որը զբաղեցնում է 2000 նստատեղ, եղել է գրեթե դատարկ: «Դահլիճը կիսադատա՞րկ էր», հարցին Գրիգորյանն առաջարկեց նման ձեւակերպում չտալ ու ասել, որ ընդամենը ամբողջությամբ լցված չէր: Թեպետ համերգի մասնակիցները փաստում են, որ դահլիճը լեփ-լեցուն էր, այդ մասին գրում է նաեւ «Անկախ.com» կայքէջի լրագրողը՝ փաստելով, որ «3-ից մինչեւ 70 տարեկան հանդիսատեսն ուղղակի գրավել էր դահլիճը»:

Գրիգորյանը չհիշեց նաեւ, թե մոտավորապես որքան մարդ կար համերգին: «Կրկնում եմ, ուղղակի վնասով ենք աշխատել, շահույթ չենք ունեցել ու այդ պայմաններում բարեգործության մասին չէր կարող խոսք գնալ», եզրափակեց նա:

Բան չունենք ասելու, այդպես էլ կարող է պատահել: Բայց շռնդալից գովազդից հետո հասարակությունն իրավունք ուներ բացատրություն ստանալու:

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

«ՍԻՎԻԼԻԹԱՍԻ» ԶԵԿՈՒՅՑԸ ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏՈՒՄ

# Ղարաբաղի համար միեւնույն չէ, թե ինչ կորոշեն բանակցություններում

**Մտահոգիչ է, որ մադրիդյան սկզբունքների նորացված տարբերակին Ադրբեջանը դրականորեն է մոտենում, Հայաստանը՝ ոչ, ինչը վերջին 12 տարում հազվագյուտ երեւույթ է: Այս տեսակետն է արտահայտել ՀՀ նախկին արտգործնախարար, «Սիվիլիթաս» հիմնադրամի հիմնադիր Վարդան Օսկանյանը Ստեփանակերտում տեղի ունեցած՝ «Հայաստան-2009. խոսույթ եւ իրականություն» տարեկան զեկույցի շնորհանդեսի ժամանակ:**

**Ըստ Վ. Օսկանյանի, որեւէ փաստաթղթի չորսի «այո» ասել այն նկատառմամբ, որ Ադրբեջանը դրան «ոչ» կասի: Հարկավոր է հստակ նշաձող ունենալ, եւ մեր պատասխանը միջազգային հանրության համար պետք է լինի ընկալելի, իսկ Ադրբեջանի համար՝ անընդունելի:**

**Ներկաների խնդրանքով անդրադառնալով քիվեսթյան փաստաթղթին, էքս- արտգործնախարարն ասաց, որ եթե այդ փաստաթուղթն ընդունվեր, ապա Լեռնային Ղարաբաղն ամբողջական ծավալով անկախություն կստանար՝ Հայաստանի հետ ցամաքային կապով, որի դիմաց կարվեին որոշ զիջումներ:**

**Ղարաբաղյան հարցում գոյություն ունի երկու մոտեցում, նկատեց բանախոսը: Առաջինը, եթե չենք ուզում ոչ մի թիզ հող տալ, ապա պետք է դուրս գանք բանակցություններից: Մյուս դեպքում պետք է պատրաստ լինել զիջումների եւ բանակցությունների գնալիս՝ խնդիր դնել, թե որ տարածքն ես զիջելու, որը՝ ոչ:**

**Անհնար է միայն օբյեկտիվ գնահատականներ տալ, որովհետեւ սուբյեկտիվ եւ օբյեկտիվ գործոնները միահյուսված են, կարծիք հայտնեց հիմնադրամի ղեկավարը: Ընդհանրապես, ըստ Վ. Օսկանյանի, ճիշտ չէ նախկին իշխանություններին միանշանակ քննադատելը: Այս առնչությամբ նա օրինակ բերեց ՀՀ առաջին նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի գործունեությունը, որը քննադատելիս՝ հարկ է հաշվի առնել նաեւ տվյալ ժամանակահատվածի դժվարությունները:**

**Շնորհանդեսի մասնակիցներին հետաքրքրում էր, մասնավորապես, բանակցություններին Ղարաբաղի մասնակցության հնարավորությունը: Իր կարծիքը հայտնելով, Վարդան Օսկանյանն ասաց, որ նման պահանջադրություն պետք է հնչի Ղարաբաղից: Միեւնույն ժամանակ, խնդիրը բարդ է այնքանով, որ Ադրբեջանը դեմ է դրան, այսինքն՝ Ղարաբաղի ներգրավման պարագայում Ադրբեջանը հրաժարվում է բանակցելուց: Այդպես եղել է 1998-ին, երբ Ռոբերտ Քոչարյանը ստիպված էր ընտրել բանակցություններից ԼՂՀ-ի դուրս մնալու տարբերակը, որպեսզի բանակցությունները շարունակվեն: Նույնը կարող է տեղի ունենալ հիմա: Եթե խնդիր է դրված՝ կամ չբանակցել ընդհանրապես, կամ էլ պետք է մասնակցի միայն Հայաստանը, ապա կընտրվի երկրորդ տարբերակը:**

**Օսկանյանը նաեւ տպավորություն հայտնեց, թե ղարաբաղցիներն այնքան ինքնավստահ են, որ իրենց համար միեւնույնն է, թե ինչ կորոշեն բանակցություններում, քանզի ցանկացած աննպաստ որոշում կմերժվի Ղարաբաղի կողմից: Այդ կարծիքը չընդունվեց ներկաների կողմից:**

**Նկատենք, որ «Սիվիլիթասի» տարեկան զեկույցի շնորհանդես Արցախում առաջին անգամ է կազմակերպվում, եւ միջոցառման կազմակերպիչները հույս հայտնեցին, որ նման միջոցառումները շարունակական կլինեն:**

ԿԻՄ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ
Ստեփանակերտ

# Թուրքը կանխատեսում է արձանագրությունների մահը ...

1-ին էջից

**Ճիշտ է, սակայն, որ Կոսովոյի անկախությունը ճանաչելու փաստից հետո Ադրբեջանը զգուշացավ՝ անընդհատ առաջարկելով խնդիրը լուծել տարածքային ամբողջականության սկզբունքի հիման վրա: Տարիներով փորձելով ԼՂ հիմնախնդրի լուծումները գտնել Մինսկի խմբի շրջանակում՝ նախ քննարկվել է Ադրբեջանի ենթակայության տակ լայն ինքնավարությունը, հետո Ադրբեջանի կազմից դուրս, բայց Ադրբեջանի համար ընդունելի տարբերակ, սակայն սրանց անընդունելիությունը պատճառ դարձավ 2007-ին ստեղծել մադրիդյան սկզբունքները, որտեղ առկա են տարածքային ամբողջականության, ազգերի ինքնորոշման եւ ուժի չկիրառման սկզբունքները: Ղարաբաղն ըստ դրանց պետք է ունենա միջանկյալ կարգավիճակ (անվտանգության երաշխիք), փախստականները պետք է վերադառնան նախկին բնակավայրեր, պետք է տեղակայվեն միջազգային խաղաղարարներ, իսկ ԼՂ կարգավիճակի վերաբերյալ էլ հանրաքվե է անցկացվելու: Այսինքն՝ Ֆասիեն կրկնեց այն, ինչ հայտնի էր, գուցե ԼՂ-ն բանակցությունների սեղան վերադարձնելու վերաբերյալ մի քիչ ծավալվեց:**

**Թաբիբ Հուսեյնովի** **կարծիքով՝ Թուրքիան սահմանը կբացի միայն ԼՂ հարցում առաջընթաց լինելուց հետո, քանի որ չի պատրաստվում իր հարաբերությունները վատացնել Ադրբեջանի հետ Հայաստանի համար: Իսկ ԼՂ հարցի լուծման համար միջազգային պայմաններն հիմա աննախադեպ են, ըստ նրա, մինչդեռ Հայաստանի եւ Ադրբեջանի ներքին զարգացումները դեռ խոչընդոտում են լուծմանը, երկու երկրների էլիտաները վախերն ու մտահոգությունները օգտագործում են իրենց դիրքերն ամրապնդելու համար: Եվ ներկայացրեց ադրբեջանական կողմի համար ընդունելի տարբերակը. ցանկացած որոշում, որը թույլ չի տա ԼՂՀ անկախության ընդունումը, ընդունելի կլինի Ադրբեջանի համար: Հուսեյնովն ասում էր, թե Ադրբեջանը որոշակի վերապահումներով ընդունել է մադրիդյան սկզբունքները, հիմա հերթը Հայաստանինն է: Իսկ ղարաբաղցիների մասնակցությունը բանակցություններին «հակաճգնաժամային» ադրբեջանցին պատկերացնում էր հնարավորինս ներառական՝ ԼՂՀ-ի հայերն ու ադրբեջանցիները պետք է մասնակցեն համոզման գործընթացին: Կարեն Ավագյանի հարցին, թե Թուրքիան երբ ձգտել է արձանագրություններին՝ նախապայմաններ չի տեսել, ինչո՞ւ է հիմա նախապայմանն դնում (ԼՂ հարցում առաջընթաց), Հուսեյնովը պատասխանեց, թե Թուրքիան շարժվում է «0 պրոբլեմ հարեւանների հետ» սկզբունքով եւ չի ուզենա մեկի հետ բարելավել հարաբերությունները՝ մյուսի հետ վատացնելով:** **Լարիսա Ալավերդյանի** **հիշեցումը, թե սովետական տարածքի վրա ԼՂՀ-ն ինքնորոշման իրավունք է իրականացրել, իսկ Ադրբեջանը արդեն իրականացված ինքնորոշման իրավունքն է ոտնահարում, Հուսեյնովն անվանեց էմոցիաներ, իսկ** **Գագիկ Մինասյանի** **այն հարցին, թե Ադրբեջանը, եթե սպառնալիքներ է տեղում, պետք է դադարեցնի բանակցությունները՝ չի կարելի համ բանակցել, համ պատերազմով սպառնալ, սրան Հուսեյնովը համաձայնեց:**

**Սաբինա Ֆրեյզերը** **ԼՂ կարգավորման բանակցային գործընթացն անվանեց մոխրագույն, իսկ հայ-թուրքական հարաբերությունները, համեմատելով ԼՂ հարցի հետ, առավել պարզ: Ի՞նչ են շահում թուրքական եւ հայկական կողմերը արձանագրությունների վավերացումից՝ ըստ Ֆրեյզերի. Թուրքիան արձանագրություններով սահմանի ճանաչում եւ իր տարածքների նկատմամբ ոտնձգության վերացում է ստանում նախ (սա փաստորեն ոչ միայն թուրքերը չեն թաքցնում, այլեւ ֆրեյզերները) եւ հուսով է՝ Ցեղասպանության ճանաչման ջանքերն այդպիսով կնսեմանան, համենայն դեպս՝ թուրքերն են այդպես մտածում նրա կարծիքով, բացի այդ՝ Թուրքիայի արտաքին քաղաքականությունն էլ հաջողություն կարձանագրի: Հայկական կողմը կստանա սահմանի բացում, հայ-թուրքական պատմաբանների աշխատանքի հետաձգում (՞), եւ Հայաստանի արտաքին քաղաքականությունն էլ հաջողություն կգրանցեր՝ Երեւանից ցույց տալով սփյուռքին, որ ինքը անկախ ուժ է, կարող է իր անկախ արտաքին քաղաքականությունը ձեւավորել մի փոքր տարբեր Սփյուռքի շահերից: Երկուսն էլ կարող էին շահած դուրս գալ: Բայց երկու երկրներում էլ մարդիկ կան, հատկապես ընդդիմադիրները, որոնք ճնշումը դնում են բացասական կողմերի վրա, ըստ հակաճգնաժամային տիկնոջ: Ֆրեյզերը նաեւ խոսեց այն մասին, որ և՛ Ադրբեջանում, և՛ Թուրքիայում արձանագրությունները ԼՂ հարցի հետ կապողներ կան. սկզբում Թուրքիան այդպես չէր կարծում, բայց Ադրբեջանն աշխատեց նրա հետ, դեր խաղացին նաեւ էներգետիկ պայմանագրերը, այնպես որ ջրերն ավելի են պղտորվել Հայաստանի ՍԴ որոշումից հետո: Նա ամփոփեց , թե արձանագրությունների մասով առաջընթաց չկա, սակայն ժողովրդի շարժը Թուրքիա եւ Հայաստան կա, ինչն ի վերջո կբերեն երկկողմ փաստաթղթերի:**

**Քաղաքագետ** **Ալեքսանդր Իսկանդարյանը** **նույնպես համամիտ էր, որ արձանագրությունների ճակատագիրն անհայտ է այս պահին: 2 գործոն ազդում է դրա վրա՝ որ Թուրքիան 1993-ին փակել է հայ-թուրքական սահմանը եւ 1915 թվականի Հայոց ցեղասպանության փաստը: Մինչդեռ ձգձգումը երկու կողմում էլ կարող է անվստահություն առաջացնել, Հայաստանում կարող է սրվել պատմական հարցերի կարեւորությունը, իսկ հարաբերությունների հաստատման հետաձգումն առավել վատ վիճակի կարող է բերել երկու երկրների հարաբերությունը, քան մինչեւ ֆուտբոլային դիվանագիտության սկիզբն էր: Ճշմարտության պահը, ինչպես սեմինարի վարողը հայտնեց, Հայաստանի կառավարության ներկայացուցիչ փոխարտգործնախարար** **Արման Կիրակոսյանը** **բացեց: Նա բացատրում էր, որ ՍԴ-ն ընդամենը որոշել է, որ արձանագրությունները չեն հակասում սահմանադրությանը, որոշման մեջ նախապայմաններ չկան, եւ չնայած դժվարություններին՝ հայկական կողմը չի մտածում, որ իր ջանքերը դատապարտված են, որ չի կարելի հայ-թուրքական արձանագրությունների վավերացումն ու ղարաբաղյան հակամարտությունը կապել, դրանք տարբեր տեմպերով են ընթանում, որ լարվածությունները տարբեր պատճառներ ունեն, այնպես որ միամտություն է այդ խնդիրների համաժամանակյա փաթեթային լուծումն ակնկալել: Թուրքիան, սակայն, դժբախտաբար փորձում է արագացնել ԼՂ կարգավորման հարցն ըստ փոխարտգործնախարարի՝ կողմնակալորեն Ադրբեջանի կողմը պահելով: Նա հույս հայտնեց, որ թուրքական կողմն անկեղծ է՝ հանդեպ գործընթացը եւ հավատում է հաջողությանը, ինչպես Հայաստանը:**

**Թուրքիայի իշխող «Արդարություն եւ բարգավաճում» կուսակցությունը ներկայացնող** **Սուաթ Քընըքլըօղլուն** **լրիվ ցույց տվեց թուրքական մոտեցումների այս պահի երեսը. այն է՝ Թուրքիան Հայաստանի հետ հարաբերություններում չի կարող անտեսել հենց իր կողքին տեղի ունեցողը (Ղարաբաղը), ու թեեւ Հայաստանը դա նախապայման է դիտում, բայց դրանք փոխամրապնդող գործընթացներ են ընդամենը, եւ թուրքերը Հարավային Կովկասն ավելի կանխատեսելի են ուզում դարձնել... Բայց, շարունակում է մեր թուրք «բարեկամը», Հայաստանի ՍԴ որոշումը պրիսակի վրա սեւով վնասեց արձանագրությունների տառին եւ ոգուն, իսկ Արեւմտյան Հայաստան կոչվածը կասկածի տակ է դնում արձանագրությունները: Քանի դեռ հավաստիացում չունեն թուրքերը, որ ՍԴ որոշման առաջին մասը նախապայման չէ, որեւէ մեկը հազիվ թե ուզենա վավերացնել արձանագրությունները, իսկ Շվեդիայում ընդունված վերջին օրինագիծն ու Կոնգրեսի 252 բանաձեւը բարդացրին եւ լրջորեն վտանգեցին արձանագրությունները. «Մտահոգված եմ, որ արձանագրությունները կարող են մահանալ», ասաց Քընըքլըօղլուն: Նա էլ հաստատեց Իսկանդարյանի պես՝ եթե գործընթացն ընդհատվի, ավելի վատ վիճակում կհայտնվեն երկու երկրները, քան մինչեւ գործընթացի սկիզբն էր: Պատասխանելով մի դիտարկման, թե պատմական ենթահանձնաժողովի հետ կապված հայերը երբեք չեն մտածել, որ Ցեղասպանության լինել-չլինելն է քննարկվելու, այլ թուրքերի իրականացրած Ցեղասպանության հետեւանքները միայն, թուրք խորհրդարանականը հրավիրեց. «Եթե չեք կասկածում, որ եղել է, եկեք հանձնաժողով եւ այդ մասին խոսեք»: Արման Կիրակոսյանն էլ դիտողություն արեց, թե անցյալ դարում 3 մլն հայ էր ապրում Թուրքիայում, ի՞նչ եղան նրանք՝ ոչնչացվեցին: Սաբինա Ֆրեյզերն էլ Թուրքիային եւ Հայաստանին ուղղված իր ապտարանքների մեջ նաեւ այսպիսի միտք հայտնեց, թե Շվեյցարիան թող գրավոր պարզաբանում տա Թուրքիային ՍԴ որոշման մասին, որ այն նախապայման չի պարունակում:**

**Կարծես թե կարողացանք այս մի քանի ելույթների միջոցով փոխանցել տրամադրությունները ԼՂ բանակցային գործընթացի եւ հայ-թուրքական հարաբերությունների շուրջը, որոնք չի կարելի ասել, թե լավատեսություն են ներշնչում: Հայ մասնակիցների դիտարկումներին շատ չանդրադարձանք, բայց հավաստիացնում ենք, որ նրանք ակտիվ բանախոսում էին:**

AZG NEW PDF.qxd 12/03/2010 22:11 Page 1



# Ահմեդ Ալթան. «Եթե թաքցնում ենք ճշմարտությունը, ուրեմն արժանի ենք նվաստացման»

***Կանադայի «Զորյան» ինստիտուտը տարածել է թուրք հայտնի հրապարակախոս, «Թարաֆ» թերթի թղթակիցներից Ահմեդ Ալթանի մարտի 6-ի «Ցեղասպանություն» հոդվածը: Ստորեւ թարգմանաբար՝ հատվածներ այդ հոդվածից:***

Բոլորը շունչը պահած հավաքված էին հեռուստացույցների առաջ, կարծես ֆուտբոլային խաղ դիտեին: Ի՞նչ է տեղի ունենում: Մ. Նահանգների Կոնգրեսի հանձնաժողովներից մեկը քվեարկության է դրել հայերի ցեղասպանության ճանաչման բանաձեւը: Քարոզչական աշխատանքների հետեւանքով մենք կորցնում ենք «խաղը» 23-22 հաշվով, եւ ամբողջ դժոխքը փուլ է գալիս մեր գլխին: Մենք մեզ նվաստացած ենք զգում...

Բայց ամբողջ Թուրքիան նվաստացած է զգում ոչ թե այն բանի համար, որ այդ հանձնաժողովը ընդունեց բանաձեւը մեկ ձայնի առավելությամբ, այլ որովհետեւ ինքը չի կարողանում լույս սփռել իր իսկ պատմության վրա եւ թույլ է տալիս, որ ուրիշները զբաղվեն այդ հարցով: Թուրքիան նվաստացած է զգում, որովհետեւ վախենում է իր անցյալից եւ խելագարի նման կծկվում է՝ ճշմարտությունը թաքցնելու նպատակով:

Ինչո՞ւ պիտի «հայերի ցեղասպանության» հարցը քննության առարկա դառնա ամերիկյան, ֆրանսիական կամ շվեյցարական խորհրդարաններում եւ ոչ թե թուրքականում:

Ինչո՞ւ մենք չենք կարող քննարկել մի հարց, որը մեզ համար այնքան կենսական նշանակություն ունի, որ մեկ ձայնի տարբերությունը մեզ նվաստացնում է:

Եթե չենք կարող քննարկել, ուրեմն արժանի ենք նվաստացման: Եթե լուռ ես մնում քեզ համար կարեւոր մի հարցի վերաբերյալ, ուրեմն արժանի ես նվաստացման: Եթե փորձես լռեցնել ուրիշներին, առավել եւս արժանի ես նվաստացման: Ամբողջ աշխարհն է այդքան մեծ թվով



(մի թիվ, որ ի վիճակի չենք նույնիսկ ճշգրտորեն հաշվելու) հայերի սպանությունները որակում «ցեղասպանություն»:

Ցեղասպանությունն իրավական եզր է: Եվ յունիոնիստների (երիտթուրքեր) գործած կոտորածները լիովին համապատասխանում են այդ եզրի սահմանումներին: Թուրքերի եւ հայերի համար «ցեղասպանություն» բառը մտասեւեռուն գաղափար է դարձել, որն անընդհատ հետապնդում է նրանց: Թուրքերն ասում են, որ «երբեք չի եղել», իսկ հայերն էլ բոլոր այդպես մտածողներին «ստախոսներ» են անվանում: Երկու կողմերն էլ միլիոնավոր դոլարներ են ծախսում, որպեսզի աշխարհին համոզեն, որ իրենց տեսակետն է ճիշտը:

Մենք պնդում ենք, որ «հայերը հարձակվեցին մեզ վրա, այդ պատճառով էլ մենք սպանեցինք նրանց»: Լավ, բայց այդ «հարձակվող» հայկական հրոսակախմբերը արեւելյան սահմանի վրա էին գործում: Ի՞նչ հանցանք էին գործել հարյուր հազարավոր մյուս հայերը, որոնք ապրում էին Անատոլիայի այլ վայրերում: Բացի հայ լինելուց, ի՞նչ մեղք էին գործել նրանք: Կարելի՞ է մեկին պատժել սոսկ իր էթնիկական պատկանելության պատճառով:

Ինչպե՞ս կարելի է որակել նման արարքը, եթե ոչ սպանություն: Եվ ճիշտն ասած, միեւնույն էթնիկական խմբավորմանը պատկանող հարյուր հազարավորների սպանությունն իրոք կարելի է որակել «ցեղասպանություն»: Յունիոնիստները նողկալի ոճիրներ գործեցին: Հայերին պատճառած նրանց դաժանությունները երեւակայությունից վեր են: Ինչո՞ւ ենք փորձում պաշտպանել մարդասպաններին: Ինչո՞ւ ենք կծկվում՝ ճշմարտությունը թաքցնելու նպատակով:

Բոլոր հասարակությունների պատմություններն էլ թաթախված են արյան եւ ոճիրների մեջ: Չենք կարող չեղյալ հայտարարել այն, ինչ եղել է: Բայց կարող ենք խիզախորեն դիմակայել ճշմարտությանը եւ քննարկել իրականությունը: Կարող ենք վերջ տալ աշխարհը լռեցնելու մեր փորձերին: Եվ իհարկե, կարող ենք հարցեր առաջադրել:

Եվ առաջին հարցը կլինի հետեւյալը.

«Ինչպե՞ս է, որ մեր պատմության գրքերում մենք երբեք չենք կարդում հարյուր հազարավորների մահվան մասին»: Եթե 95 տարի առաջ կատարված իրականությանը չես կարող դիմակայել, ուրեմն արժանի ես նվաստացման, որովհետեւ ոչ ոք չի համարձակվի նվաստացնել ուժեղին, որը չի վախենում ճշմարտությունից:

**Թարգմ. Հ. Ծ.**

# Տիբեթը՝ խիստ վերահսկողության տակ

Ֆրանսիական RFI ռադիոկայանը հաղորդում է, որ Պեկինը բանակային լրացուցիչ ուժեր է ուղարկել Տիբեթ: ՉԺՀ ոստիկանությունն ավելի վաղ՝ մարտի 11-ին մամուլում հայտարարել էր, որ ձեռնարկված հատուկ արշավի շրջանակներում ձերբակալվել են հարյուրավոր տիբեթցիներ: Արշավը կրում է «Ուժգին փոթորիկ» պայմանական անվանումը:

ՉԺՀ իշխանությունները վախենում են, որ Տիբեթում տեղի կունենան անկախականների բազմամարդ ցույցեր: RFI-ի տվյալներով, Տիբեթ են բերվել 1500 զինվոր եւ ոստիկան: Տեղական կառավարության կայքէջը հաղորդում է, որ խուզարկություններ են կատարվել հազարավոր տներում: Ստուգվել են հյուրանոցների հյուրերի մասյանները, ինչպես նաեւ ինտերնետային սրճարանների համակարգիչները: Պաշտոնապես դա արվում է «քրեական հանցագործությունները կանխելու» պատրվակով:

1959 թվականի մարտին հակաչինական ապստամբության ճնշումից հետո ՉԺՀ իշխանություններն ամեն տարվա մարտ ամսին նախազգուշական միջոցներ են ձեռնարկում Տիբեթում: Այս տարի ձերբակալվել է առնվազն 400 մարդ: Տիբեթի կենտրոն Լհասայի եւ Նեպալի մայրաքաղաք Կատմանդուի միջեւ օդային հաղորդակցու-



թյունը ժամանակավորապես դադարեցված է: Պեկինում չեն մոռացել, որ երկու տարի առաջ հակաչինական ցույցերը վերաճեցին խռովությունների եւ չին-տիբեթական բախումների: Տարբեր աղբյուրների համաձայն, սպանվեց մի քանի տասնյակից մինչեւ 200 մարդ:

# Սեպտեմբերի 11-ի հետեւանքներից տուժած փրկարարներին կվճարվի 657,5 մլն դոլար

Նյու Յորքի իշխանությունները համաձայնել են ընդհանուր առմամբ 657,5 մլն դոլար փոխհատուցում վճարել 2001-ի սեպտեմբերի 11-ի ահաբեկչություններից հետո քաղաքում փլուզված երկու երկնաքերների ավերակները մաքրած հազարավոր փրկարարներին եւ մյուս անձանց:

Խոսքն ավելի քան 10 հազար հայցվորների մասին է, որոնք ասում են, որ օդում կախված շինարարական փոշին եւ ծուխը վնասել են իրենց առողջությանը:

Փրկարարները եւ մյուս մասնագետները շաբաթներ էին անցկացրել Համաշխարհային առեւտրի կենտրոնի զույգ աշտարակների փլուզման տեղում: Ըստ որում, նրանցից քչերն էին ապահովագրված նման աշխատանքների կատարման համար:

Ի վերջո հազարավոր մարդիկ հայտարարել էին, որ շնչառական համակարգի խնդիրներ են ծագել կամ օրգանիզմում քաղցկեղ է հայտնվել:

Փոխհատուցումներ վճարելու քաղաքային իշխանությունների առաջարկությունը կարող էր ուժի մեջ մտնել, եթե դրան հավանություն տային հայցվորների 95 տոկոսը, ինչպես նաեւ դատավորը, նշում է BBC-ն:

Փողերը վճարվելու են Նյու Յորքի տնօրինմանը ենթակա 1 մլրդ դոլարանոց պետական հատուկ ապահովագրական հիմնադրամից:

Ներկայումս տվյալ գործով զբաղվող իրավաբանները որոշում են, թե ինչպիսի փոխհատուցում կարող է ստանալ այս կամ այն հայցվորը: Սպասվում է, որ կրած առողջական վնասի համեմատ անհատական փոխհատուցումների չափը կկազմի մի քանի հազարից մինչեւ ավելի քան 1 մլն դոլար:



# Քննադատվում է Գերմանիայի կառավարությունը

**«Վտարանդի հայերը քննադատել են Բեռլինի կեցվածքը Ցեղասպանության հանդեպ» վերնագրով հոդվածում «Դեր թագեսշպիգելի» հեղինակ Մաթթիաս Մայսները ներկայացրել է Գերմանահայոց կենտրոնական խորհրդի՝ 2009-ի հոկտեմբերին ընտրված ատենապետ Ազատ Օրդուխանյանի՝ արտգործնախարարության պետնախարար Կոռնելիա Փիփերին (ազատ դեմոկրատական կուսակցություն) ուղարկված՝ թերթի գնահատմամբ սուր քննադատական նամակը: Դաշնային կառավարությունը «100 հազարավոր» հայերի սպանդը 1915-16-ին Օսմանյան կայսրությունում ցեղասպանություն չի որակում, պարզաբանում է թերթը՝ հրազեկելով, թե Գերմանահայոց կենտրոնական խորհուրդը Գերմանիայում բնակություն հաստատած 60 000 հայերի համայնքային միությունները միավորող կազմակերպություն է:**

**Գերմանիայի դերը 1915-ի ցեղասպանության մեջ այնքան ակներեւ է, որ այս երկիրը առանձնահատուկ պատասխանատվություն պիտի ստանձնի վերանայման եւ ցեղասպանության ճանաչման գործում: Իրապես անտանելի է այն միտքը, որ Գերմանիայի կառավարությունը ակտիվորեն մասնակցում է ցեղասպանության ուրացմանը, ծանր հակահարված հասցնելով Ցեղասպանության ճանաչման տասնամյակների ջանքերին, գրել է ԳԿԽ ատենապետը:**

**Թեմային կանդրադառնանք առաջիկայում:**

**Ան. Հ.**
**Գերմանիա**

# Հիվանդագին արձագանք Շվեդիայի խորհրդարանի որոշմանը

*1-ին էջից*

**Հայոց ցեղասպանության ճանաչման առումով թերեւս բանաձեւերից ամենաընդգրկունը ընդունել է Ներկայացուցիչների պալատի հանձնաժողովը, իսկ Շվեդիայի խորհրդարանը, ներառելով բանաձեւում նաեւ ասորիների եւ Պոնտոսի հույների ցեղասպանությունները, նախադրյալներ է ստեղծել, որ հայկականին զուգահեռ, միջազգայնորեն ճանաչվեն նաեւ դրանք:**

**Ամեն անգամ, երբ որեւէ խորհրդարան ճանաչում էր Հայոց ցեղասպանությունը, Թուրքիայի ղեկավարները, արձագանքելով դրան բուռն հակազդեցությամբ, դատապարտում էին ճանաչման որոշումը: Շվեդիայի խորհրդարանի դեպքում, սակայն, ոչ միայն որոշումը դատապարտվեց, այլեւ չեղյալ հայտարարվեց Շվեդիա-Թուրքիա գագաթաժողովի համար վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանի մարտի 17-ին Ստոկհոլմ նախատեսվող այցը: Այդ ընթացքում պարզաբանումների համար Շվեդիայում Թուրքիայի դեսպանը Անկարա, իսկ Թուրքիայում Շվեդիայի դեսպանը կանչվեցին արտգործնախարարություն:**

**Թե դեսպանները ի՞նչ պարզաբանումներ են տվել, չգիտենք: Բայց որ Թուրքիայի նախագահ Աբդուլլահ Գյուլի արձագանքը ոտնահարում է քաղաքավարության տարրական կանոնները, ակնհայտ է: Ահա թե, CNN-turk-ի վկայությամբ, ինչ է պատասխանել Գյուլը «Ինչպե՞ս եք գնահատում Շվեդիայի խորհրդարանում հայերի պնդումները ներառող որոշման ընդունումը» հարցին. «Մենք շատ լավ գիտենք, թե ինչպես են ընդունվում այդպիսի որոշումները: Դրանք մեզ համար որեւէ արժեք չունեն: Ուզում եմ կրկնել ԱՄՆ-ի Կոնգրեսի առնչությամբ ասածներս. Եթե հարցնես (շվեդ պատգամավորներին), չեն կարող երեք բառ ասել (Հայոց ցեղասպանության մասին): Իրականում չնչին շարժառիթներով գործող մարդիկ են: Պատմության հանդեպ կատարված անհարգալից վերաբերմունքն է մեզ վշտացնում: Կարճ ասած՝ պետք չէ չափազանցել, որովհետեւ չի կարելի չափազանցել այն հարցերը, որոնք մեզ համար արժեք չեն ներկայացնում»:**

**Ինչ վերաբերում է վարչապետ Էրդողանի այցը չեղյալ հայտարարելու հանգամանքին, ապա այդ մասին էլ նշվել է վարչապետարանի մամուլի կենտրոնի տարածած կառավարական հաղորդագրության մեջ, որտեղ ասված է. «Ցավով ենք տեղեկացել, որ Շվեդիայի խորհրդարանը Օսմանյան կայսրության վերջին շրջանում որոշ ժողովուրդների նկատմամբ ցեղասպանության իրագործման օրինագիծ է ընդունել: Խստագույնս դատապարտում ենք որոշումը: Մեր ժողովուրդն ու կառավարությունը մերժում են այս անհիմն եւ մեծ սխալներ պարունակող որոշումը: Նրանք, ովքեր կարծում են, որ պատմական ճշմարտություններն ու սեփական պատմության նկատմամբ Թուրքիայի տեսակետները կփոխվեն օտարերկրյա խորհրդարանների շահադիտական որոշումներով, չարաչար սխալվում են: Մարտի 17-ին նախատեսվող Շվեդիա-Թուրքիա գագաթաժողովն ու մեծարգո վարչապետի այցը Ստոկհոլմ չեղյալ են հայտարարված»:**

# Բուշի գլխավոր խորհրդականն արդարացնում է կտտանքները

**Ջորջ Բուշ կրտսերի գլխավոր խորհրդական Կառլ Ռոուվը հայտարարել է, որ հպարտանում է ենթադրյալ ահաբեկիչների նկատմամբ կիրառված ջրային կտտանքներով: Այդ մասին նա ասել է BBC-ին երեկ տված հարցազրույցում:**

**Նախկին խորհրդականի կարծիքով, որին նաեւ «Բուշի ուղեղ» էին անվանում, նման վարվելաձեւն ամերիկյան հատուկ ծառայություններին օգնել է կանխելու նոր ահաբեկչությունները: Ընդսմին Ռոուվը հրաժարվել է խոստանգում ճանաչել կասկածյալների նկատմամբ կիրառված ջրահեղձման նմանակումը, սակայն նշել է, որ այդ միջոցը խիստ արդյունավետ է եղել եւ օգնել է ընճելու մի շարք ահաբեկիչների:**

**Ռոուվը նաեւ հայտնել է, որ ջրահեղձման նման փորձությունների ենթարկվելը մտնում էր ամերիկացի զինծառայողների պատրաստման ծրագրի մեջ, սակայն չի մանրամասնել տվյալ «արարողակարգի» նշանակությունը: Նախկին խորհրդականի կարծիքով, կասկածյալների հարցաքննության ժամանակ «հատուկ» մեթոդների կիրառումը չի խախտում ոչ մարդու իրավունքների պահպանման ոլորտում ԱՄՆ-ի ստանձնած միջազգային պարտավորությունները, ոչ էլ դաշնային օրենքները:**

**Մարտի 9-ից ԱՄՆ-ում վաճառքի հանվեց Կառլ Ռոուվի «Արիություն եւ ազդեցություն» հուշագիրքը, որտեղ նա լիովին արդարացնում է 2003-ին Իրաք կատարված ներխուժումը եւ ափսոսանք է արտահայտում լոկ այն կապակցությամբ, որ ինքը չի կարողացել ռազմարշավը պաշտած կերպով պաշտպանել բազմաթիվ քննադատներից: Նախկին խորհրդականն իր գրքում նաեւ ժխտում է այն կարծիքը, որ պետությունը քաղաքացիներին դիտավորյալ ապատեղեկացրել է սեփական ռազմավարությունն արդարացնելու նպատակով:**

**2009-ի հունվարի 22-ին նախագահ Բարաք Օբամայի առաջին ձեռնարկումներից մեկը դարձավ կասկածյալների խոշտանգումն արգելող հրամանագրի ստորագրումը: Այդ փաստաթղթի համաձայն, տվյալների հայթայթման բոլոր մեթոդները պետք է համապատասխանեն Ժնեւի կոնվենցիային: Հենց այդ ժամանակ էլ նախագահը կարգադրեց փակել ենթադրյալ ահաբեկիչների համար Գուանտանամոյի ռազմակայանում ստեղծված բանտը, որպեսզի կալանավորներն այլեւս չենթարկվեն դաժան վերաբերմունքի:**

AZG NEW PDF.qxd 12/03/2010 22:10 Page 1



# Չարենց-113

# Կոնրադ Քուհնն. «Աշխատել եմ մոտ մնալ լեզվի մեղեդուն, ռիթմին, չափին, հանգին, պատկերին, մտածելու ձեւին»

***2010-ի ապրիլին գերմանական ARCO հրատարակչությունը (Վուպպերթալ, Վիեննա) լույս կընծայի Եղիշե Չարենցի բանաստեղծությունների հատընտիրը՝ արեւելահայերեն, գերմաներեն տարբերակով: Թարգմանիչը մեր թերթի ընթերցողներին ծանոթ դրամատուրգ Կոնրադ Քուհնն է, ով արդեն երկու անգամ Չարենցի հիշյալ հրատարակությունը ներկայացրել է գերմանախոս հանրությանը 2010-ի մարտի 6-ին Լյուցեռնի գրքի ամենամյա տոնավաճառին եւ դրանից առաջ՝ 2009-ի նոյեմբերի 27-ին Դոմֆորումում՝ Քյոլնի Հայ մշակույթի օրերի շրջանակներում: 2009-ի օգոստոսին Կոնրադ Քուհնի հետ ստորեւ ներկայացվող հարցազրույցին անկեղծ ասած չէի պատկերացնում, որ նա Չարենցն այդքան իրենն է դարձրել: Դրանում համոզվելու հրաշալի առիթն ունեցա նոյեմբերին Քյոլնում: Տեւական, պրպտուն աշխատանք. Չարենցի կենսագրության որեւէ դետալ չի վրիպել ուշադրությունից, գրականագիտական այդպիսի՛ ուսումնասիրության արդյունքում, պարզ է, Չարենցի պոեզիան անշուշտ հասանելի, անընդմիջելի մերձավոր կդառնա: Դոմֆորումի լեցուն դահլիճը սպասում էր հատկապես «Ես իմ անուշ Հայաստանի» բանաստեղծության թարգմանությանը: Կոնրադի հայերեն ընթերցումն արդեն բավարար էր հասկանալու, թե գերմաներենը հաջողված գործ է լինելու: Դահլիճն այդպես բուռն ու անկեղծ ծափ չէր շռայլի, եթե մեր ունկերում արթուն, աղոթք դարձած տողերը գերմաներեն այդքան հնչեղ չլինեին:***

***Տեղի սղության պատճառով՝ առայժմ այսքանը: Չարենցի հիշյալ հատընտիրին դեռ կանդրադառնանք:***

**- Հայերենից գերմաներեն Ձեր թարգմանությունների սկիզբը, եթե չեմ սխալվում, Կոմիտասը եղավ: (Խոսքը 2005-ին «Բայերիշե ռունդֆունկի» թողարկած Հասմիկ Պապյանի եւ դաշնակահար Վարդան Մամիկոնյանի «Նվիրում Կոմիտասին» լազերային ձայնասկավառակին կից տպագիր գրքույկի մասին է, որին «Ազգն» անդրադարձել է ժամանակին): Ի՞նչը ստիպեց Ձեզ Չարենց թարգմանել:**

- Մի կողմից ինձ հետաքրքրեց այն, որ Չարենցը շատ մոդեռն է, իսկապես ժամանակակից, էքսպերիմենտներ է արել (ֆուտուրիզմ եւ այլն), բայց միեւնույն ժամանակ, մանավանդ վերջին տարիներին շատ լավ հիշել է հայկական ավանդույթները, փնտրել է նոր կերպեր եւ երբեք չի կորցրել իր գործերում առկա կրակը:Հայերի համար Չարենցը դարձել է ազգային բանաստեղծ: Սարոյանն է ասել՝ «Ես իմ անուշ Հայաստանի» բանաստեղծությունը մեզ համար «Հայր մեր» դարձավ: Մանսուրյանն ասում է՝ Չարենցը հայ ազգի հոգին է: Եվ դա ճիշտ է, ես էլ այդպես եմ զգում: Դրա համար ընտրեցի նրան, սկսեցի հետաքրքրվել, խորանալ ավելի: Չարենցի կյանքը շատ տխուր էր, մեծ ողբերգություններ է տեսել, բայց մինչեւ վերջին օրը ինքն իրեն հավասարիմ է մնացել: Բարձր մակարդակի գրող է: Գերմանիայում Մանդելշտամը շատ հայտնի է, բոլորը գիտեն, թե ով է եղել, որ Ստալինը նրան սպանել է: Իհարկե թե՛ որպես մարդ, թե՛ որպես արվեստագետ շատ տարբեր են, բայց, իմ կարծիքով, Չարենցը նույն մակարդակն ունի: Ուզեցի, որ գերմանացիները մի քիչ ավելի լավ կարողանան հասկանալ նրան:

**- Չարենցի բանաստեղծական շրջանները շատ տարբեր են: Որքան գիտեմ՝ փորձել եք բոլոր գրքերին անդրադառնալ եւ թարգմանական հատընտիր ներկայացնել: Գերմանացի ընթերցողի համար Չարենցի ո՞ր շարքը հատկապես հետաքրքրական կլինի:**

- Աշխատել եմ ընտրել այնպիսի բանաստեղծություններ, որոնք կկարողանամ լրիվ թարգմանել եւ գրքում ներկայացնել: Այդ է պատճառը, որ երկար պոեմներ չեմ վերցրել: Օրինակ՝ «Սոմա» կամ «Ամբոխները խելագարված», «Ռեքվիեմ», որոնք շատ հետաքրքրական են, իհարկե, բայց երկար տեքստեր են: Իմ կարծիքով, ամենահետաքրքրական գիրքը վերջինն է՝ «Գիրք ճանապարհին», բայց դա էլ շատ երկար պոեմներ ունի՝ «Մահվան տեսիլը», «Պատմության քառուղիներում» եւ «Աքիլլե՞ս, թե՞ Պիերո» ինտերմեդիան, որ հետո ստիպված հանել եմ գրքից, Չարենցի՝ Ստալինի եւ Տրոցկու մասին գրած այս ստեղծագործությունն ինձ համար շատ հետաքրքրական գործ է: Հույս ունեմ, որ մի օր «Գիրք ճանապարհին» ամբողջությամբ կթարգմանեմ: Եթե ժամանակ գտնեմ, իհարկե: Բայց այն գիրքը, որ Գերմանիայում լույս պիտի տեսնի, ուզեցի, որ մի քիչ ամբողջական Չարենց ներկայացնի՝ ստեղծագործական սկզբից մինչեւ ամենավերջին տեքստերը, որոնք կենդանության օրոք երբեւիցե չեն տպագրվել:




**- Կոնրադ, հայ գրականությունը եթե չասենք անհայտ, ապա շատ հայտնի չէ Գերմանիայում: Ձեր կարծիքով, ո՞րն է դրա պատճառը՝ փոքր երկրի գործո՞նը, թարգմանիչների մեծ բանակ չունենա՞լը: Մենք փակ ենք մնացել աշխարհի, այս պարագայում Գերմանիայի համար մի կողմից, բայց մյուս կողմից՝ դեռ անցյալում Հայաստանից Գերմանիա ուսանելու միշտ են եկել, կապը թերեւս միշտ է եղել:**

- Առաջին հերթին կասեմ, որ սփյուռքահայերն աշխարհում ամենուր են, բայց մեծ ներկայություն ունեն ԱՄՆ-ում եւ Ֆրանսիայում,Կանադայում: Եվ իհարկե նրանք են աշխատել, որ անգլերենով եւ ֆրանսերենով այդ մեծ հարստությունից գոնե մի փոքր մաս ներկայացնեն: Իսկ Գերմանիայում կապն ավելի շատ Արեւելյան Գերմանիայի հետ է եղել, գրականության առումով դա մի քիչ անհաջող է եղել, որովհետեւ հաճախ ռուսերենի միջնորդությամբ է կատարվել թարգմանությունը, եւ իմ կարծիքով, հաճախ դարձել բոլորովին ուրիշ բան: Դրա համար ուզեցի անմիջական բնագրից թարգմանել եւ աշխատել եմ մոտ մնալ լեզվի մեղեդուն, ռիթմին, չափին, հանգին, պատկերին, մտածելու ձեւին: Հաճախ նկատել եմ, որ, օրինակ, հայերենից ֆրանսերեն թարգմանված պոեմները դարձել են լրիվ ուրիշ բան, կարող է շատ գեղեցիկ լինեն, բայց, իմ կարծիքով, բոլորովին ուրիշ բան են՝ շատ հեռու բնագրից: Կարծում եմ, որ գերմաներենը հայերենից այդքան հեռու չէ, ինչպես ֆրանսերենը: Չարենցի լեզուն արեւելահայերենն է եղել, եւ Աբովյանի ժամանակներից մինչեւ Տերյան ու Թումանյան միշտ գերմաներենն է եղել հայոց լեզվի բարեփոխման մոդելը:

**- Գյոթեն, Հայնեն, գերմանացի էլի ուրիշ պոետներ, Չարենցի ձեւակերպմանը դիմեմ՝ «մոտիկ» պոետներ են եղել հայերիս համար: Աղետը կար, ուստի Ձեր միջնորդությամբ հայազգի «մոտիկ» բանաստեղծը ներկայացվում է գերմանացիներին: Ժամանակակից հայ գրականության մի անթոլոգիա կա, որ թարգմանել եւ կազմել է Ռաֆֆի Քանդյանը, որ մեր հարցումներով, ջերմ արձագանք է գտել, Չարենցն ինչպե՞ս կընկալվի, շա՞տ ընթերցող կունենա, տարիքային ո՞ր խումբը կփնտրի գիրքը:**

- Կարծում եմ, որ Գերմանիայում շատերը կան, որ հետաքրքրված են սովետական մշակույթով, սկզբում գիրքը հենց այդ ընթերցողին առավել կհետաքրքրի: Ուզում եմ իմ գրքի առաջաբանում անպայման մի քիչ ավելի լայն ներկայացնել Չարենցի կենսագրությունը. շատ հետաքրքրական կյանք է ունեցել, առիթ է Չարենցի կենսագրության միջոցով հայոց պատմությանն անդրադառնալ: Բանաստեղծությունները, իմ ցանկությամբ, տպագրվելու են բնագրով եւ գերմաներենով: Գրքի շապիկի համար Սարյան տուն-թանգարանից արտոնություն ենք ստացել՝ կկարողանանք օգտագործել Մարտիրոս Սարյանի «Չարենցը դիմակով» նկարը, որ շատ-շատ գեղեցիկ է: Մեծ սիրով են համաձայնել, եւ ես շատ շնորհակալ եմ իրենց:

**- Չարենցից զատ հայ էլ ո՞ր բանաստեղծներն են եղել Ձեր ուշադրության առանցքում, ո՞ւմ եք ցանկացել թարգմանել:**

- Շատ-շատ տպավորված եմ Նահապետ Քուչակի «Հայրեններով»: Տիգրան Մանսուրյանի գրած շարքն առիթ դարձավ, որ դրանց մի մասը գերմաներեն, իսկ այնուհետեւ նաեւ ֆրանսերեն թարգմանեմ, որովհետեւ 2008-ին համերգը Ֆրանսիայում եղավ: Քուչակի լեզուն այնքա՛ն հարուստ է, շատ հեռու եմ, որ կարողանամ իսկապես հասկանալ: Չարենցը շատ լավ գիտեր Ֆիրդուսի, ռուբայաթներ, գազելներ է գրել, ճապոնական հոքուներ եւ թանկաներ, բայց պարսկական ավանդները նրա համար միշտ շատ կարեւոր են եղել: Դա մեզ համար էլ կարող է շատ հետաքրքրական լինել, որովհետեւ հայկական մշակույթը եվրոպական մշակույթ եմ համարում, բայց իհարկե՝ շատ մոտ արեւելքին: Այդ պատճառով կարող է մեզ համար էլ միջնորդ լինել, գերմանացիները դրա մասին շատ չգիտեն:

**- Հայոց լեզվից թարգմանություններ անելու, հայերենը այսպես յուրացնելու ու սիրելու հարցում Ձեր կնոջ՝ երգչուհի Հասմիկ Պապյանի դերը շատ մեծ է եղել: Ինձ հանդիպած՝ հայոց լեզվի հազվագյուտ բառագանձը հրաշալի կիրառող, փայլեցնողներից մեկն է Հասմիկը: Որքա՞ն է նրա դերը Չարենց թարգմանելու մեջ:**

- Դժվար հարց է: Առաջին հերթին պիտի նկատել, որ հայերեն-գերմաներեն բառարանները շատ աղքատ են, բառեր կային, որ չգիտեի, Հասմիկին եմ հարցրել, եւ այս օգնությունն ինձ համար շատ կարեւոր է եղել: Բացի այդ ինքը միշտ ուզեցել է, որ այս աշխատանքից հեռու մնա, միայն վերջում է կարդացել եւ այդ ժամանակ, իհարկե, ինձ շատ թանկարժեք խորհուրդ է տվել: Նա ոչ միայն հայերեն է փայլուն հասկանում, խոսում, այդ լեզվով ստեղծված մշակույթին շատ մոտ է, այլեւ գերմաներենին էլ շատ լավ է տիրապետում, բնագրով կարդացել է գերմանացի հեղինակներին: Հասմիկն ինձ համար ամենախիստ քննադատն է: Շատ քիչ է եղել, որ կարողացել է Չարենցի տեքստերը կարդալ առանց հուզվելու, լաց լինելու:

**- Ուրիշ ընթերցողներ էլի կա՞ն:**

-Իհարկե: Քրիստոֆ Հաքըն՝ գրող է, Arco հրատարակչատան խմբագիրը: Ինքն ավելի շատ ուշադրություն է դարձնում գերմաներեն լեզվին, որովհետեւ բնագրի լեզուն չի կարող հասկանալ, բայց անգլերեն թարգմանությունները կարդացել է: (Eghishe Charents, Land of Fire. selected poems; edited and translated by Diana Der Hovanessian and Marzbed Margossian. Ardis Publishers, Ann Arbor, 1986): Այս՝ «Կրակի երկիր» գրքի որոշ թարգմանություններ փայլուն են, մի քանիսն էլ բնագրից շատ հեռու են գնացել: Գիրքն ինձ շատ է օգնել, հասկացել եմ, որ կարելի է թարգմանելիս ազատություն ունենալ, բայց հետո որոշել եմ, որ այդքան ազատ չեմ ուզում թարգմանել, լրիվ ուրիշ բան է դառնում: Իտալերեն մի գիրք կա Չարենցի մասին (Elise Ciarenz, Odi Armene nellinterpretazione di Mario Verdone e un saggio sul Futurismo Armeno. Ibiskos-Ulivieri, Empoli, 2007), որ շատ հավանել եմ, Մարիո Վերդոնեն իտալացի գրականագետ է, մասնավորապես ֆուտուրիզմի մասին նա շատ աշխատություններ ունի, Չարենցի տուն-թանգարանում ինձ պատմել են, որ նա եղել է Երեւանում: Թեպետ շատ բանաստեղծություններ չի թարգմանել, իմ գիրքն ավելի մեծ ծավալ ունի, հանգն ու չափը չի պահել, բայց թարգմանությունները փայլուն են: Ուրիշ մի գրքի մասին էլ. Մարկ Նշանյանը 1997-ին Նյու Յորքի Կոլումբիա համալսարանում մեծ գիտաժողով է հրավիրել, արդյունքում հրատարակել «Yeghishe Charens. Poet of the Revolution»( Mazda Publishers, Costa Mesa 2003) անգլերեն գիրքը, որում շատ մեծ նյութ կա Չարենցի մասին: Գիրքն ինձ շատ է օգնել հասկանալու Չարենցին:

Թատրոնում աշխատելու տարիներին թարգմանել եմ անգլերենից, ֆրանսերենից, իտալերենից, եւ այս թարգմանությունները որպես դրամատիկական գործ բեմում ներկայացվել են, բայց գրքեր չկան:

**- Ուրեմն հայերենը նոր փուլ է սկսում Ձեր ստեղծագործական կյանքում:**

- Այո, սա առաջին գիրքն է, եւ ես շատ գոհ եմ, որ հայերենից արված թարգմանությունն է այդ փուլը սկսում:

ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ
Գերմանիա

ՃԱՐՏԱՐԱՊԵՏԻ

## Վատը կրկնելն ավելի վատ բան է

Հայաստանի ճարտարապետների միությունը համաձայն չէ կառավարության՝ «Մոսկվա» կինոթատրոնի ամառային դահլիճի տեղում եկեղեցի կառուցելու որոշմանը: Ավելի ճիշտ, ըստ կառավարության որոշման, պետք է վերականգնվի Սուրբ Պողոս-Պետրոս եկեղեցին, որը եղել է մոտավորապես կինո «Մոսկվայի» տարածքում:

«Վերականգնել մի եկեղեցի, որը ճարտարապետական արժեք չի ունեցել, ուղղակի անիմաստ է, եւ այդ տեղում եկեղեցին ընդհանրապես չի ներգծվում, անհրաժեշտ կլինի քանդել «Մոսկվա» կինոթատրոնը, որի կառույցը մեր ճարտարապետության համար կարեւոր նշանակություն ունի: Այդտեղ շատ-շատ կարող է կառուցվել եկեղեցի ինչ-որ ուրիշ նկատառումներով», երեկ «Ուրբաթ» ակումբում՝ ասուլիսի ժամանակ ասաց ճարտարապետների միության նախագահ **Մկրտիչ Մինասյանը:**

Ճարտարապետների միությունն իր բողոքը հայտնել է կառավարությանը եւ արդեն ստացել է կառավարության պատասխան նամակը, որտեղ ասվում է՝ կառավարությունը, հարգելով կաթողիկոսի խնդրանքը, հատկացնում է «Մոսկվա» կինոթատրոնի ամառային դահլիճի տարածքը՝ եկեղեցի կառուցելու համար:

«Քաղաքի կենտրոնում՝ Կաթողիկե եկեղեցու կողքը, կառուցվելու է նոր եկեղեցի ու մի քիչ ներքեւ՝ էլի եկեղեցի... Շատ լավ է, որ ամբողջ Հայաստանի տարածքով կառուցվում են նոր եկեղեցիներ, սակայն մեր հուշարձանները գտնվում են սոսկալի վիճակում, լավ կլինի՝ բարերարների ուշադրությունն ուղղենք հուշարձանների պահպանությանը», ասաց Մկրտիչ Մինասյանը:

Ս. Պողոս-Պետրոս եկեղեցին կառուցվել է 18-րդ դարի սկզբին, քանդվել՝ 1934 թվականին, ու փոխարենը՝ 1960-ականներին կառուցվել է «Մոսկվա» կինոթատրոնը:

**Բանախոսի կարծիքով՝ օպերայի շենքի տեղում մատուռ է եղել, իսկ Չարենցի անվան դպրոցի տեղում՝ եկեղեցի, հիմա նույն տրամաբանությամբ այդ տեղերո՞ւմ էլ պետք է եկեղեցիներ կառուցենք:**

**Ճարտարապետների միությունն իր բողոքներով մտադիր է նորից դիմել կառավարությանն ու կաթողիկոսին:**

**«Վերջին հաշվով կառավարությունը մասնագիտական միությունների կարծիքը գոնե պետք է լսի», վերջում հավելեց Մկրտիչ Մինասյանը:**

ԻՆԳԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

## Ժանսեմն ու Գուերան պարգեւատրվել են Պատվո շքանշանով

ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի հրամանագրով ֆրանսահայ անվանի նկարիչ **Հովհաննես Սեմերջյանը (Ժանսեմ)** պարգեւատրվել է Պատվո շքանշանով՝ հայ-ֆրանսիական մշակութային կապերի ամրապնդման գործում ներդրած նշանակալի ավանդի համար, ինչպես նաեւ ծննդյան 90-ամյա հոբելյանի առթիվ:

Նախագահի մեկ այլ հրամանագրով կինոգործիչ **Տոնինո Գուերան** պարգեւատրվել է Պատվո շքանշանով՝ հայ-իտալական մշակութային կապերի ամրապնդման գործում ներդրած մեծ ավանդի, համաշխարհային կինոարվեստում ունեցած ծանրակշիռ վաստակի եւ ծննդյան 90-ամյա հոբելյանի առթիվ:

Ս. Ս.

AZG NEW PDF.qxd 12/03/2010 22:31 Page 1





# Լիլիթ Գալոյանը շարունակեց հաղթարշավը

## *Վլադիմիր Հակոբյանն առաջատարների խմբում է*

Շախմատի Եվրոպայի անհատական առաջնությունում իր հաջող ելույթներն է շարունակում Լիլիթ Գալոյանը: 6-րդ տուրում հայ շախմատիստուհին սեւերով հաղթեց ուկրաինացի միջազգային վարպետ Աննա Ուշենինային: Այդ հաջողությունից հետո Լիլիթը վաստակեց 5 միավոր ու շարունակում է տեղ զբաղեցնել առաջատարների խմբում: Նույնքան միավոր ունեն նաեւ բուլղարացի Անտոանետա Ստեֆանովան եւ լիտվացի Վիկտորյա Չմիլիտեն: Ստեֆանովան հաղթեց Կետեւան Արախամիա-Գրանտին, Չմիլիտեն պարտության մատնեց Սվետլանա Մատվեեւային:



Աղյուսակը 5,5 միավորով գլխավորում է լեհ Մոնիկա Սոչկոն, որը սպիտակներով պարտության մատնեց ռուսաստանցի Տատյանա Կոսինցեւային:

Լիլիթ Մկրտչյանն ու Էլինա Դանիելյանը վաստակել են 3,5 միավոր: Երկուսն էլ պարտիաներն ավարտեցին ոչ-ոքի: Լիլիթը հաշտություն կնքեց Իրինա Չելյուշկինայի, Էլինան՝ Էլվիրա Բերենդի հետ: 2 անընդմեջ պարտություններից հետո վերջապես հաղթանակ տարավ հանրապետության այս տարվա չեմպիոնուհի Անահիտ Խառատյանը: Նա հաղթեց Վերենա Սամանիչին: Իսկ ահա Նելլի Աղինյանը 2-րդ անընդմեջ պարտությունը կրեց՝ զիջելով Քրիստինա Սոլիչին: Անահիտն ու Նելլին ունեն 2 միավոր:

Տղամարդկանց մրցաշարում առաջատարների խմբում գտնվող Հրանտ Մելքումյանի եւ Սամվել Տեր-Սահակյանի համար 6-րդ տուրն անհաջող էր: Երկուսն էլ պարտվեցին եւ մրցաշարային աղյուսակում նահանջեցին: Հրանտը պարտվեց ռուսաստանցի գրոսմայստեր Յան Նեպոմնյաչչիին, Սամվելը զիջեց ռուսաստանցի մեկ այլ գրոսմայստեր Ալեքսանդր Ռյազանցեւին: Մեր շախմատիստներն ունեն 4 միավոր: Նրանք մրցաշարում անդրանիկ պարտությունները կրեցին:

Նրանց շրջանցեց Հայաստանի պատվիրակներից ամենատարեցն ու փորձառուն՝ Վլադիմիր Հակոբյանը: Հաղթելով շվեյցարացի Յանիկ Պելետիերին, Հակոբյանը վաստակեց 4,5 միավոր եւ մտավ առաջատարների շարքը: Աղյուսակը 5,5 միավորով գլխավորում են Զախար Եֆիմենկոն եւ Բայադուր Ջոբավան: Եֆիմենկոն հաղթեց Դիտեր-Լիվիու Նիսիպեանուին, Ջոբավան առավելության հասավ Արտյոմ Տիմոֆեեւի նկատմամբ: 5 շախմատիստներ՝ Յան Նեպոմնյաչչին, Ալեքսանդր Ռյազանցեւը, Ռաուֆ Մամեդովը, Զոլթան Ալմաշին եւ Բոյան Վուչկովիչը 5-ական միավորով հետապնդում են առաջատարներին:

3,5-ական միավոր ունեն Գաբրիել Սարգսյանը, Տիգրան Պետրոսյանը, Ռոբերտ Հովհաննիսյանը եւ Դավիթ Պետրոսյանը: Նրանցից միայն Դավիթ Պետրոսյանն է առայժմ առանց պարտության հանդես գալիս: Դավիթն առայժմ միայն մեկ հաղթանակ է տոնել, մյուս 5 պարտիաներն ավարտել է ոչ-ոքի, այդ թվում Վասիլի Եմելինի հետ մրցավեճը: Գաբրիելը եւս ոչ-ոքի խաղաց Սինիշա Դրազիչի հետ, իսկ Տիգրան Պետրոսյանն անդրանիկ պարտությունը կրեց՝ զիջելով Սլովակիայում բնակվող Սերգեյ Մովսիսյանին: 3-ական միավոր ունեն Արման Փաշիկյանը, Զավեն Անդրեասյանը, Արտաշես Մինասյանը, Ավետիք Գրիգորյանը: Նրանց կես միավոր է զիջում Վլադիմիր Պողոսյանը, իսկ Վահե Բաղդասարյանի օգտին գրանցված է 2 միավոր:

ՖՈՒՏԲՈԼ

# «Փյունիկը» կրկին հաղթեց

**Իտալիայում ուսումնամարզական հավաքի մեջ գտնվող «Փյունիկը» ստուգողական 2-րդ հանդիպումն անցկացրեց: Այս անգամ Հայաստանի չեմպիոնը մրցեց Հռոմի տարածաշրջանի առաջնությանը մասնակցող «Ալբալոնգա» թիմի հետ: Հանդիպումն անհաջող սկսվեց փյունիկցիների համար, որոնք գոլ ընդունեցին սեփական դարպասը: Սակայն հետագայում «Փյունիկը» բեկում մտցրեց մրցակցությունում եւ հաղթեց 4-2 հաշվով: 2 գոլ խփեց Մարկոս Պիզելին, մեկական անգամ աչքի ընկան Ալբերտ Թադեւոսյանն ու Էդգար Մալաքյանը:**

**Իտալիայում գտնվելու ժամանակ «Փյունիկի» գլխավոր մարզիչ Վարդան Մինասյանն ու ակումբի գործադիր տնօրեն Կարեն Հարությունյանը հրավիրվել են «Ռոմայի» մարզաբազա, որտեղ դիտել են թիմի մարզումը, առանձնազրույց են ունեցել հռոմեական ակումբի մարզական տնօրեն Բրունո Կոնտիի եւ թիմի գլխավոր մարզիչ Կլաուդիո Ռանյերիի հետ: «Փյունիկի» ներկայացուցիչները նաեւ այցելել են «Ռոմայի» ավագ Ֆրանչեսկո Տոտիի հիմնադրած ակադեմիան, ծանոթացել են պայմաններին, մարզումների ընթացքին: «Ռոմայի» եւ «Փյունիկի» միջեւ համագործակցության նախնական պայմանավորվածություն է ձեռք բերվել:**

# Գավաթային խաղերի վայրերը որոշվեցին

Հաստատվել է ֆուտբոլի Հայաստանի գավաթի քառորդ եզրափակիչ հանդիպումների խաղացանկը: Մարտի 23-ին «Փյունիկ»-«Իմպուլս» հանդիպումը կկայանա «Հանրապետական» մարզադաշտում: Նույնը օրը «Գանձասարը» Կապանում կհյուրընկալի «Ուլիսին»:

Մարտի 24-ին «Միկան» «Կիլիկիային» կհյուրընկալի սեփական խաղադաշտում: «Շիրակն» էլ Գյումրիում ուժերը կչափի «Բանանցի» հետ:

Պատասխան խաղում, ապրիլի 6-ին «Իմպուլսը» Դիլիջանի քաղաքային մարզադաշտում կմրցի «Փյունիկի» հետ: Նույն օրը «Հրազդանում» կկայանա «Ուլիս»-«Գանձասար» հանդիպումը: Հաջորդ օրը «Հրազդանում» կմրցեն «Կիլիկիան» եւ «Միկան», իսկ «Բանանցը» «Հանրապետականում» կհյուրընկալի «Շիրակին»:

Մարտի 23-ին եւ 24-ին կայանալիք խաղերը կսկսվեն ժամը 15-ին, պատասխան հանդիպումները՝ ժամը 16-ին:

# Որակազրկման ժամկետը կրճատվեց

**Ինչպես տեղեկացրել ենք, ֆուտբոլի Հայաստանի ազգային հավաքականի գլխավոր մարզիչ Վարդան Մինասյանը խնդրանքով դիմել էր ՀՖՖ նախագահին՝ հավաքականի շահերից ելնելով կրճատել «Միկայի» կիսապաշտպան Աղվան Մկրտչյանի որակազրկման ժամկետը: Վերջինս անցած տարի «Գանձասարի» խաղացող Արտաշես Անտոնյանի ոտքը կոտրելու համար որակազրկվել էր մինչեւ այս տարվա սեպտեմբեր:**

**ՀՖՖ կարգապահական կոմիտեն հաշվի առնելով Վ. Մինասյանի խնդրանքը, Աղվան Մկրտչյանի որակազրկման ժամկետը կրճատել է մինչեւ այս տարվա մարտի 20-ը: Այնպես որ Աղվանը կարող է մասնակցել ՀՀ գավաթի եւ առաջնության հանդիպումներին:**

# Գերմանական ակումբների հաջող ելույթը

**Կայացան ֆուտբոլի Եվրոպայի լիգայի 1/8 եզրափակիչի առաջին հանդիպումները: Հաջող հանդես եկան գերմանական թիմերը, որոնք 2 խաղ ավարտեցին ոչ-ոքի, մեկում՝ հաղթեցին: Հաջողությունն ուղեկցեց «Համբուրգին», որը սեփական հարկի տակ 3-1 հաշվով պարտության մատնեց բելգիական «Անդերլեխտին»: Իսկ «Վոլֆսբուրգն» ու «Վերդերը» հյուրընկալվելիս «Ռուբինի» եւ «Վալենսիայի» հետ հանդիպումներն ավարտեցին միեւնույն 1-1 հաշվով: Նույնպիսի արդյունք գրանցվեց նաեւ պորտուգալական «Բենֆիկայի» եւ ֆրանսիական «Մարսելի» մրցավեճում:**

**Հաջորդ փուլ դուրս գալու լուրջ հայտ ներկայացրեց Թուրինի «Յուվենտուսը»: Իտալացիները սեփական հարկի տակ 3-1 հաշվով հաղթեցին անգլիական «Ֆուլհեմին»: Բելգիական «Ստանդարտն» էլ հյուրընկալվելիս 3-1 հաշվով հաղթեց հունական «Պանաթինաիկոսին»:**

**Անսպասելի էր ֆրանսիական «Լիլի» հաղթանակը սեփական հարկի տակ հզոր «Լիվերպուլի» նկատմամբ (1-0): Թեեւ պորտուգալական «Սպորտինգը» իսպանական «Ատլետիկոյի» հետ արտագնա խաղում դաշտում մնացել էր 9 հոգով, սակայն կարողացավ անառիկ պահել դարպասը: Խաղն ավարտվեց գոլազուրկ ոչ-ոքիով:**



# Հոլիֆիլդը երազում է աշխարհի բացարձակ չեմպիոնի տիտղոսի մասին

**Ապրիլի 10-ին Լաս Վեգասում գերծանր քաշային կարգում աշխարհի նախկին բացարձակ չեմպիոն Էվանդեր Հոլիֆիլդը կմենամարտի IBF-ի վարկածով աշխարհի ներկայիս չեմպիոն, հարավաֆրիկացի Ֆրանսուա Բոտայի հետ: Հոլիֆիլդի կարծիքով, այդ մենամարտն իրենից առանձնակի ջանքեր չի խլի: Հոլիֆիլդն արդեն սկսել է մարզումները Տոմի Բրուքսի հետ Լոս Անջելեսում: Բոտայի հետ մենամարտելու համար Հոլիֆիլդը 150 հազար դոլար կստանա, նաեւ որոշակի պարգեւավճար նրան կտրվի հանդիպման հեռարձակման կազմակերպիչներից:**




**47-ամյա Էվանդեր Հոլիֆիլդի գլխավոր նպատակը գերծանր քաշային կարգում կրկին աշխարհի բացարձակ չեմպիոնի տիտղոսի նվաճումն է. «Երբ 1999-ին մենամարտում էի Լենոքս Լյուիսի հետ, ցանկանում էի դառնալ աշխարհի բացարձակ չեմպիոն: Այժմ իմ նպատակը նույնն է: Երբ հասնեմ նպատակիս, կհեռանամ ռինգից»:**

**Հոլիֆիլդը նաեւ հերքել է Մայք Թայսոնի հետ մենամարտ անցկացնելու մասին լուրերը: Նա նշել է, որ Թայսոնից նման առաջարկ չի ստացել:**

# Խաղացանկը կքննարկվի Մոսկվայում

**Ինչպես հայտնի է, մարտի 15-ին Մոսկվայում քննարկվելու է Եվրո-2010-ի ընտրական «B» խմբի խաղացանկը: Այդ քննարկմանը Հայաստանը կներկայացնեն ՀՖՖ փոխնախագահ Աշոտ Մանուկյանը եւ ՀՖՖ հավաքական թիմերի բաժնի պետ Էդգար Մանուկյանը:**

**Հիշեցնենք, որ եթե կողմերին չհաջողվի քննարկման ընթացքում ընդհանուր որոշում կայացնել եւ կազմել խաղացանկը, ապա այն կկազմի ՈՒԵՖԱ-ն վիճակահանության միջոցով:**

# Դրոգբան լավագույնն է Աֆրիկայում

**Լոնդոնի «Չելսիի» եւ Կոտ դ'Իվուարի հավաքականի հարձակվող Դիդյե Դրոգբան ճանաչվել է Աֆրիկայի 2009-ի լավագույն ֆուտբոլիստ: Այդ տիտղոսի համար պայքարում նա գերազանցեց իտալական «Ինտերի» եւ Կամերունի հավաքականի հարձակվող Սամյուել Էտո'Օ-ին ու իր թիմակից, Գանայի հավաքականի կիսապաշտպան Միքայել Էսիենին:**



*Ձեւ N1*

**ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԵԿՇԻՌ**
**առ 01. 01. 2010 թ.**

ծածկագիրը

| | | |
|---|---|---|
| Կազմակերպության անվանումը | **«Արշակ եւ Լուսինե» ՍՊԸ** | |
| Փաստացի գործունեություն | ՇԽ կազմակերպում | |
| հիմնական երկու տեսակները | ՇԽ 203 | |
| Պետռեգիստրում գրանցման համարը | | 28204000497 |
| Հարկ վճարողի հաշվառման համարը | | 00814094 |
| Չափի միավորը | | հազ. դրամ |
| Գտնվելու վայրը | Երեւան, Դեմիրճյան 17ա/10 | հեռ. 093000068 |
| Փաստացի գործունեության իրականացման վայրը | Արարատի մարզ, գ. Արգավանդ, Իսակով, թ. 4 խանութ 1-ին հարկի մի մաս | |

| ԱԿՏԻՎ | տող | Նախորդ տարվա վերջին | Հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) վերջին |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| I. Ոչ ընթացիկ ակտիվներ | | | |
| Հիմնական միջոցներ | 010 | - | 3196,0 |
| Ոչ նյութական ակտիվներ | 030 | - | 1250,0 |
| Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ | 080 | - | 4446,0 |
| II. Ընթացիկ ակտիվներ | | | |
| Կարճաժամկետ դեբիտորական պարտքեր բյուջեի գծով | 170 | 128,0 | 128,0 |
| Դրամական միջոցներ եւ դրանց համարժեքներ | 200 | - | 6726,0 |
| Ընդամենը ընթացիկ ակտիվներ | 220 | 128,0 | 6854,0 |
| ՀԱՇՎԵԿՇԻՌ | 230 | 128,0 | 11300,0 |
| **ՊԱՍՍԻՎ** | **տող** | **Նախորդ տարվա վերջին** | **Հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) վերջին** |
| 1 | 2 | 3 | 4 |
| III. Սեփական կապիտալ | | | |
| Կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի զուտ գումար | 240 | 50 | 50 |
| Կուտակված շահույթ | 270 | | 8157,0 |
| Սեփական կապիտալի այլ տարրեր, այդ թվում՝ | 290 | (101,0) | - |
| Ընդամենը սեփական կապիտալ | 300 | (51,0) | 8207,0 |
| IV. Ոչ ընթացիկ պարտավորություններ | | | |
| Երկարաժամկետ բանկային վարկեր եւ փոխառություններ | 310 | - | 179,0 |
| Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ | 360 | - | 179,0 |
| V. Ընթացիկ պարտավորություններ | | | |
| Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր բյուջեին | 410 | - | 2394,0 |
| Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր պարտադիր սոցիալական ապահովագրության գծով | 420 | - | 80,0 |
| Կրեդիտորական պարտքեր աշխատավարձի եւ աշխատակիցների այլ կարճաժամկետ հատուցումների գծով | 430 | - | 440,0 |
| Այլ կրեդիտորական պարտքեր | 450 | 179,0 | - |
| Ընդամենը ընթացիկ պարտավորություններ | 490 | 179,0 | 2914,0 |
| ՀԱՇՎԵԿՇԻՌ | 500 | 128,0 | 11300,0 |

*Ձեւ N2*

**ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**
**01.01.2009-01.01.2010 թ.,**

| Ցուցանիշի անվանումը | տող | Հաշվետու տարի (միջանկյալ ժամանակաշրջան՝ աճողական) |
|---|---|---|
| 1 | 2 | 4 |
| Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից հասույթ | 010 | 41318,0 |
| Իրացված արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ինքնարժեք | 020 | (28189,0) |
| Համախառն շահույթ (վնաս) | 030 | 13129,0 |
| Վարչական ծախսեր | 050 | (4871,0) |
| Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից շահույթ (վնաս) | 060 | 8258,0 |
| Գործառնական շահույթ (վնաս) | 090 | 8258,0 |
| Սովորական գործունեությունից շահույթ (վնաս) | 140 | 8258,0 |
| Զուտ շահույթ (վնաս) նախքան շահութահարկի գծով ծախսի նվազեցումը | 160 | 8258,0 |
| Զուտ շահույթ (վնաս) շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո | 180 | 8258,0 |

Ղեկավար Գ. Օրմանյան (անուն, ազգանուն)
Գլխ. հաշվապահ Ա. Արմենյան (անուն, ազգանուն)

«Սաթեն աուդիտ» ՍՊԸ
լից. 027

AZG NEW PDF.qxd 12/03/2010 22:30 Page 1





# Ծանուցում

EUROPEAN UNION
Delegation of the European Union to Armenia

## VACANCY - ADMINISTRATIVE ASSISTANT post nr. 20734 Sysper2 ref. 114027

The officer will work in a small team. This position requires the highest professional standards, excellent organisational skills, a high degree of preciseness and ability to work with tight deadlines.

**REQUIREMENTS**

- University degree and/or diploma/certificate in the field of accountancy
- Fluent English, Armenian and Russian (written/spoken). French an asset.
- Computer literacy (incl. accounting software)
- Knowledge of accounting, procurement and asset management procedures
- Knowledge of Armenian law (incl. social law) and public tendering procedures an asset
- Proven experience of a minimum of 4 years experience in the field, preferably in an international environment.
- Good team player
- Quick learner
- Responsible personality

**DESCRIPTION OF POSSIBLE TASKS**

- Preparation and follow up of contracts (housing of officials, service contracts, etc.) in three languages
- Preparation of annual budget in accordance with regulations set by headquarters
- Budget follow-up
- Drafting of various analytical reports
- Asset management
- Preparation and follow up of personnel files, recruitment procedures, social security calculations, salary review of local agents, etc.
- Petty cash handling
- Initiation and verification of procurement, payment and budget commitment files
- Public Tendering
- Assisting the Head of Administration with various tasks

Candidates are strongly encouraged to consult the following websites :
**http://www.delarm.ec.europa.eu/en/** and **http://www.europa.eu**
The Pre-selection and Selection procedures may include numerical and verbal reasoning tests, knowledge of the E.U., specific job related tests and an interview.
The tasks/requirements listed here are indicative and may evolve with time.

Motivation letter and Curriculum Vitae in English, mentioning Application for Administrative Assistant position should be sent before March 20th to :
E-mail: **delegation-armenia-administration@ec.europa.eu**
We look forward to receiving your application. Due to the expected high number of applications, the Delegation will only be able to respond to applications that respond to the requested qualifications and form requirements, and sent to us before the deadline.

EUROPEAN UNION
Delegation of the European Union to Armenia

## CONSTITUTION OF RESERVE LIST FOR THE RECRUITMENT OF AN ASSISTANT ACCOUNTANT

Applications received for this position will be examined as soon as the delegation needs to recruit agents for this post from the general public (i.e. after initial internal selection procedure).
The officer will work in a small team. This position requires a high degree of preciseness and professionalism.

**REQUIREMENTS**

- Diploma/certificate in the field of accountancy
- Fluent English, Armenian and Russian (written/spoken). French an asset.
- Computer literacy (incl. accounting software)
- Knowledge of accounting, procurement and asset management procedures
- Assist with preparation of annual budget
- Drafting of reports
- Knowledge of Armenian law (incl. social law) and public tendering procedures an asset
- A minimum of 3 years experience in the field, preferably in an international environment.
- Good team player
- Fast learner
- Responsible personality

**DESCRIPTION OF POSSIBLE TASKS**

- Data entry and initiation of procurements and payments in the accounting software (budget requests, budget commitments, third party identities, invoices, payment requests, payment orders, purchase orders, regularisations, etc.)
- Monthly and annual closing, preparation of budget review data
- Data entry of housing and personnel information in various software packages
- Preparation and follow-up of social security and provident fund payments
- Petty cash handling
- Assisting the Head of Administration with various tasks

Candidates are strongly encouraged to consult the following websites :
**http://www.delarm.ec.europa.eu/en/** and **http://www.europa.eu**
The Pre-selection and Selection procedures may include numerical and verbal reasoning tests, knowledge of the European Union, a specific job related test and an interview.
The tasks/requirements listed here are indicative and may change according to the European Commission's practice or to the Delegation's internal organisation.

Motivation letter and Curriculum Vitae in English, mentioning 'Expression of Interest in an Assistant Accountant position should be sent before 2 April 2010 to :

Anne-Marie Vandeschoor
Head of Administration
European Commission Delegation to Armenia
Frik Street 21 (entrance from Proshyan)
Fax: (374-1) 54 64 95
E-mail: **delegation-armenia-administration@ec.europa.eu**

AMERIABANK

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«Ամերիաբանկ» ՓԲԸ անհրաժեշտ է տարածք՝ մասնաճյուղի համար:

**Տարածքների գտնվելու վայրը**

1. Կենտրոն վարչական տարածք, Փոքր Կենտրոն
2. Արաբկիր վարչական տարածք, Կոմիտաս պողոտա
3. Քանաքեռ-Զեյթուն վարչական տարածք, Հաղթանակ զբոսայգու շրջակա տարածք

**Տարածքների անհրաժեշտ չափանիշները**

- Տարածքը պետք է գտնվի փողոցի մարդաշատ եւ բանուկ հատվածում, լինի առանձին շինություն կամ գտնվի շենքի առաջին հարկում, ոչ բարձր մայթի հարթության մակարդակից:
- Տարածքի ընդհանուր չափը՝ 200 - 400 քմ
- Առաստաղի բարձրությունը՝ առնվազն 3 մ
- Ճակատային հատվածում անհրաժեշտ է առնվազն երեք վիտրաժի առկայություն, մուտք փողոցի կողմից, պահեստային դուռ բակի կողմից:
- Ցանկալի է նկուղ՝ ոչ պակաս քան 30 քմ, առաստաղի բարձրությունը ոչ պակաս քան 2,70 մ, մուտք դեպի նկուղ՝ առաջին հարկից:
- Տարածքի դիմացը ցանկալի է մեքենաների կայանատեղի առկայություն:

**Պահանջվող փաստաթղթեր**

- նամակ - առաջարկ՝ նշելով ակնկալվող ամսական վարձավճարի չափը, տարածքի համառոտ նկարագրությունը,
- տարածքի սեփականատիրոջ կոնտակտային տվյալները,
- անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայականի պատճենը,
- լուսանկարներ, որոնք հստակ բնորոշեն տարածքի գտնվելու վայրը:

Փաստաթղթերն ուղարկել **setup@ameriabank.am** էլ. հասցեով կամ փակ ծրարով հանձնել «Ամերիաբանկ» ՓԲԸ, հասցե՝ ք. Երեւան, Գ.Լուսավորչի 9:

***Առաջարկություններ հեռախոսազանգերով չեն ընդունվում:***

## UN Country Team in Armenia
## CALL FOR APPLICATIONS
## TRANSLATION/INTERPRETATION, EDITING SERVICES

The United Nations Country Team in Armenia intends to sign long term agreements (LTAs) with individuals and companies and hereby solicits proposals for the following services:

1. Written translation, simultaneous interpretation and consecutive interpretation from Armenian to English and vice versa, from Russian to English and vice versa, from Russian to Armenian and vice versa.
2. Editing of English, Armenian and Russian texts.

The scope of services will include, but may not be limited to, translation from/to the above mentioned languages in the following thematic areas:
Democratic Governance, Poverty Reduction, Economic Development, Crisis/Conflict Prevention and Recovery, Energy and Environment, Refugee/Internally Displaces Persons, Food Security, Nutrition, Education, Child Protection, Gender Issues, Health Issues, HIV/AIDS.

Pre-qualification requirements are:
- University degree, preferably in linguistics;
- At least five years of professional experience in translation and/or editing field.

Application package must consist of:
- Full CV and filled in P11 form (available at: **http://operations.undp.am/Recruitment/Default.aspx);**
- The list of translated documents/materials;
- An extract of 150 words of (computer count) the latest translated documents (from English or one of the other mentioned languages into Armenian);
- Copies of relevant diplomas, certificates;
- At least two positive references from the previous contractors.

Application package must be submitted in a closed envelope marked as UNLTA/Translators to the UN security desk, 14 Petros Adamyan St., Yerevan, 375010, Armenia.

**Deadline: 26 March 2010, 17:00**

**Late or incomplete applications will not be considered.**

Only shortlisted candidates will be contacted, and invited for a written test and/or verbal exercises. Translators/Editors, passing all the stages of evaluation procedure will be awarded a contract for two years, with possible extension for one additional year.

## ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

Շնորհակալություն ոստիկանության պետ **Ներսես Նազարյանին** եւ **Արամ Վարդանյանին**՝ իրենց շնորհակալ աշխատանքի համար:

*Դասախոս՝ Մ. Գ. Աղաբաբյան*

## ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

ՀՀ բնապահպանության նախարարության կողմից ՀՀ ջրային օրենսգրքի եւ ՀՀ կառավարության 07.03.03 թ. N 217-Ն եւ N 218-Ն որոշումների պահանջների համաձայն մշակվում է ՀՀ Սյունիքի մարզում գործող **«Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ** կողմից Գեղի ջրամբարի ելքամասի վրա «Գեղի» ՓՀԷԿ-1-ի կառուցման եւ նույն ջրամբարից ջրաչքի նոր ջրօգտագործման թույլտվության նախագիծը:

Բոլոր շահագրգիռ անձինք, ովքեր կցանկանան ծանոթանալ փաստաթղթի նախագծի նախնական տարբերակին, կարող են աշխատանքային օրերին ժամը 17-18-ը դիմել ՀՀ բնապահպանության նախարարություն (հասցեն՝ Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ):

Հասարակայնության կողմից փաստաթղթի նախնական տարբերակի լսումը տեղի կունենա 2010 թ. մարտի 18-ին, ժամը 16-ին Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ:

*ՀՀ բնապահպանության նախարարություն*

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատվական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 17.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝ 12.03.2010, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Նոյեան Տապան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: